ԳԼՈԲՈՒՍ

Հրատարակվում է
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աջակցությամբ

8 (87)

ԵՐԵՎԱՆ

2017

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 8 (87), 2017

«ԳԼՈԲՈՒՍ» ՏԵՂԵԿԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշոտ Թավադյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Աշոտ Թևիկյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների և Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի կառավարման ամբիոնների դասախոս, տ.գ.թ.

Գագիկ Հարությունյան (համակարգող)
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Էդուարդ Լ.Դանիելյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ.

Կարեն Վ.Կարապետյան
ՀՀ վարչապետ, տնտեսագիտության դոկտոր

Մուշեղ Լալայան
ՀՀԿ փոխնախագահ

Սամվել Մանուկյան
«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, ս.գ.թ.

Վահագն Ազլյան
«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահ, տ.գ.թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր
Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի տեղակալներ
Սամվել Մանուկյան
Վահագն Ազլյան

Պատասխանատու խմբագիր
Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու քարտուղար
Լուսինե Բաղրամյան

Խմբագիրներ
Արեստակես Սիմավորյան
Դիանա Գալստյան
Կարեն Վերանյան
Վահրամ Հովյան

Էջադրող-ձևավորող
Տաթևիկ Քարաուղլանյան

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 8 (87), 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Հարությունյան
Եվրասիական միություն. հնարավորություններ և խնդիրներ 5

Արա Մարջանյան
Ֆիքսված լայնաշերտ կապի հզորությունը և արագությունը
Հայաստանում և տարածաշրջանում. փաստեր 12

Կարեն Վերանյան
Նոր միտումներ հայ-իսրայելական հարաբերություններում 27

Հայկ Գաբրիելյան
«Նոր Թուրքիա». պատմական ջրբաժաններ 37

Արմեն Մանվելյան
Էներգետիկ գործոնը արդի միջազգային հարաբերություններում 44

Էդուարդ Աթանեսյան
«Հավիտենական կյանքի իրավունքը»
որպես քաղաքական-իրավական դոկտրին լիբերալ աշխարհում 50

Հուշագիր հեղինակին 59

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ. ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ

*Գագիկ Հարությունյան**

Հայաստանը 2015թ. հունվարի 2-ին պաշտոնապես միացավ Եվրասիական տնտեսական միությանը (*ԵԱՏՄ*), որի մեջ այսօր մտնում են Ռուսաստանը, Ղազախստանը, Բելառուսը և Ղրղզստանը: Սակայն երբեմն տպավորություն է ստեղծվում, թե այդ քայլը Հայաստանում շատերի համար զուգակցվում է լոկ Ռուսաստանի հետ կապերի հետագա ամրապնդմամբ, ոչ ավելին: Այս հանգամանքն, իհարկե, առկա է, ինչն էլ տարբեր քաղաքական և հատկապես հասարակական խմբավորումներին շահարկումների առիթ է տալիս: Եվրասիա եզրը շատերի ընկալումներում կրում է բացառապես «աշխարհագրական», այն էլ՝ ոչ այնքան ընկալելի (հաշվի առնելով *ԵԱՏՄ* աշխարհագրական իրողությունները) իմաստ, ոչ ավելին: Ակնհայտ է, որ նման իրավիճակը պայմանավորված է, առաջին հերթին, ոչ այնքան մտածված և անարդյունավետ տեղեկատվական քաղաքականությամբ, որը վարվում է *ԵԱՏՄ* շրջանակներում, և այս հարցն առանձին դիտարկում է պահանջում: Այսպիսով, հարկ է ընդունել, որ *ԵԱՏՄ* հասկացական ապարատը, գաղափարախոսությունը և ռազմավարությունը «վերծանելու» և մեկնաբանելու փորձը հայկական հանրության համար արդիական խնդիր է: Ակնհայտ է, որ այդ հասկացությունների մեկնաբանումները կարող են տարբերվել այն պատկերացումներից, որոնք ընդունված են *ԵԱՏՄ* այլ երկրներում, բայց այդ հանգամանքն այն ամենի առանձնահատկությունն է, ինչն այսօր վերաբերում է Եվրասիական ինտեգրմանը:

Ինչպես հայտնի է, Եվրասիան երկրագնդի ամենամեծ մայրցամաքն է, որի մակերեսը մոտ 54 մլն կմ² է, այսինքն՝ ողջ ցամաքի 36%-ը: Եվրասիայի բնակչությունն ավելի քան 5 մլրդ է, ինչը կազմում է երկրագնդի բնակչության 70%-ը: Ներկայում Եվրասիայում է գտնվում աշխարհի 195 պետությունից 92-ը: Այստեղ է կենտրոնացված նաև համաշխարհային

* «Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն:

տնտեսական պոտենցիալի մոտավորապես 70%-ը: Եվրասիայի տարածքում են ձևավորվել մեզ հայտնի գրեթե բոլոր մոնոթեիստական կրոնները՝ քրիստոնեություն, բուդդայականություն, հուդայականություն, իսլամ և այլն, որոնք առաջ են եկել հունա-հռոմեա-բյուզանդական, հայկական, սլավոնա-ռուսական, չինական, հինդուիստական, իրանական և այլ քաղաքակրթությունների հիման վրա:

Հատկապես նշենք, որ վերը թվարկված որոշ ֆորմացիաներ բավական էական վերափոխությունների են ենթարկվել, և այսօր Եվրասիայի քաղաքակրթական-կրոնական քարտեզը նոր մեկնաբանման կարիք ունի, և այս հարցին մենք դեռևս հակիրճ կանդրադառնանք: Բայց և այնպես, Եվրասիայի էթնո-կրոնա-քաղաքակրթական, աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական պատկերը բավական բազմակողմ է և խայտաբղետ: Այս մայրցամաքի խոշոր պետությունները միմյանց հետ ունեցել և այսօր էլ ունեն բավական հակասական հարաբերություններ, սեփական շահեր և պատկերացումներ առհասարակ աշխարհակարգի մասին: Այդ պատճառով մայրցամաքը դարձել է մարդկությանը հայտնի խոշոր պատերազմների և շարունակվող քաղաքական-տնտեսական ու քաղաքակրթական-կրոնական դիմակայությունների մեծ մասի ասպարեզ[1]: Նման իրավիճակում այդ ընդարձակ տարածքում ինտեգրացիոն գործընթացների մասին խոսելն ավելի քան դժվար է թվում: Միևնույն ժամանակ, ինչպես հայտնի է, ամեն բան հոսում և փոխվում է: Այս համատեքստում շրջադարձային եղան քսաներորդ և քսանմեկերորդ դարերը, երբ աշխարհում և, առաջին հերթին, Եվրասիայում, տեղի ունեցան իրադարձություններ և փոփոխություններ, որոնք, եթե հետևենք Ջ.Ռիդի դասական սահմանմանը, «ցնցեցին աշխարհը»:

«Գաղափարախոսական հարց»

Վերը նշված փոփոխությունները պայմանավորված էին, առաջին հերթին, երկու ունիվերսալ գաղափարախոսությունների՝ սոցիալիստականի և լիբերալի, ինչպես նաև յուրաքանչյուր ժողովրդին և երկրին հատուկ

[1] Նշենք, որ այդ պատերազմների հիմքում միշտ չէ, որ ընկած են եղել ազգային կամ այլ բարձր շահերը: Արդի հետազոտությունների համաձայն՝ մարդկությունը վերջին 6000 տարիների ընթացքում միայն 300 տարի է առանց պատերազմների ապրել: Այսպիսով, չի կարելի լիովին բացառել վարկածն այն մասին, թե փոխոչնչացման «բնազդն» ընկած է ինչ-որ տեղ՝ *«homo sapiens»*-ի գենետիկ կոդի խորքերում:

ազգային պահպանողականի ձևավորմամբ, բյուրեղացմամբ և բացարձակացմամբ: Եթե սույն հարցը ներկայացնենք (ժամանակագրությունը պահպանելով) հնարավորինս ընդհանրացված-սխեմատիկ ձևով, ապա գաղափարախոսական այդ գործընթացի զարգացման մեջ վճռորոշ և շրջադարձային են եղել հետևյալ իրադարձությունները.

- 1917թ. հեղափոխությունը Ռուսաստանում, Ռուսական կայսրության հիմքի վրա ԽՍՀՄ կազմավորումը, որտեղ գերիշխում էր սոցիալիստական գաղափարախոսությունը և այդ գաղափարախոսության տարածումը Եվրասիայի հսկայական հատվածում՝ Բեռլինից մինչև Պեկին:
- 1933թ. Գերմանիայում նացիոնալ-սոցիալիստների իշխանության գալը, Երրորդ ռեյխի հիմնումը (որտեղ գերիշխում էր հիբրիդային նացիոնալ-պահպանողական գաղափարախոսությունը):
- 1991թ. ԱՄՆ (անգլոսաքսոնական հանրության) հաղթանակը «Առաջին սառը պատերազմում» և միաբևեռ աշխարհի ձևավորումը, որտեղ գերիշխում էր լիբերալ գաղափարախոսությունը:

Չխորանալով համաշխարհային նշանակության այս գործընթացների մանրամասներում՝ նշենք միայն, որ թվարկված բոլոր գաղափարախոսական մակրոնախագծերն արդյունքում այս կամ այն կերպ ավարտվեցին տապալմամբ: Եվ եթե Երրորդ ռեյխի զուտ ռազմական վերացումը կամ էլ ԽՍՀՄ փլուզումը՝ համալիր քաղաքական տեխնոլոգիաների միջոցով, կատարված փաստեր են, ապա ոչ այդքան դրամատիկ, բայց նույն անխուսափելի ելքով այսօր անշրջելիորեն տեղի են ունենում միաբևեռ աշխարհի փլուզումը և բազմաբևեռ, բազմագաղափարախոսական աշխարհակարգի ձևավորումը[2]: Այդ զարգացումների տրամաբանությունը թույլ է տալիս պնդել, որ ընդամենը մեկ գաղափարախոսական հայեցակարգի մոնոպոլ և համատարած կիրառումը հանգեցնում է բավական աննպաստ հետևանքների: Միևնույն ժամանակ, եթե փորձենք այդ հայե-

[2] Հնարավոր է, որ այդ գործընթացի առավել ցայտուն ցուցիչներն են հանդիսանում ոչ թե հայտնի աշխարհաքաղաքական, աշխարհատնտեսական զարգացումները, այլ լիբերալ գաղափարախոսության պարագլուխ անգլոսաքսոնական հանրության՝ ինքնամեկուսացման (*brexit*-ների) հետևողական քայլերը՝ ԵՄ-ից Մեծ Բրիտանիայի դուրս գալու ձևով, և ԱՄՆ նախագահական ընտրություններում Դ.Թրամփի հաղթանակը:

ցակարգերը համեմատել նրանց վերջնարդյունքներով, ապա դժվար չէ տեսնել, որ դրանցից ոչ մեկը վերջնականապես չի «մահացել» և, ավելի շուտ, առավել օպտիմալ է թվում դրանց ներդաշնակ համադրությունը սոցիալիստական, լիբերալ և ազգային-պահպանողական գաղափարախոսությունների «եռյակի» տեսքով[3]: Հատկանշական է, որ այս եռյակի բաղկացուցիչ մասը՝ սոցիալիստական գաղափարախոսությունը, իր էքսպանսիայի առումով, ամենաարդյունավետն է եղել՝ ժողովուրդների համար իրավահավասար պայմանների ստեղծման իմաստով՝ առհասարակ, և նրանց զարգացման խթանման գործում: Օրինակ, արդի Չինաստանը (որը հմտորեն կարողանում է պահպանել գաղափարախոսական «եռյակի» սկզբունքը) «սոցիալիստական ճամբարի» ծնունդ է, որը, ինչպես արդեն նշեցինք, անցյալ դարի 50-60-ական թթ. ձգվում էր Բեռլինից մինչև Պեկին: Եվ սա վերաբերում է ոչ միայն վիթխարի Չինաստանին. օրինակ, Սիբիրի փոքրաթիվ ազգություններն այսօր ունեն պետական ինքնավարություններ, որոնցում գործում են ակադեմիական ինստիտուտներ, օպերայի և բալետի թատրոններ և այլն: Այս առնչությամբ նշենք, որ տխրահռչակ *homo soveticus-ն* իր մտավոր և հոգևոր ցենզով նկատելիորեն գերազանցում էր Արևմուտքի իր գործընկերներին: Այնինչ, *de facto* Չինաստանի բրիտանական օկուպացիայից հետո (1839-1842թթ. և 1858-1860թթ. «ափիոնի պատերազմներ») այդ երկիրը հայտնվեց խոր անկման մեջ, իսկ Ամերիկայի և Կանադայի, Ավստրալիայի և Նոր Զելանդիայի բնիկ ժողովուրդները լավագույն դեպքում հայտնվեցին ռեզերվացիաներում: Այս համատեքստում հարկ է ուշադրություն դարձնել անգլոսաքսոնական ոճի գաղութատիրական քաղաքականության ատրիբուտիկայի բացակայությանը ԽՍՀՄ-ին միացած (կամովին կամ իրենց կամքից չկախված) երկրների հանդեպ[4]: Բնութագրական է, որ ԽՍՀՄ-ի նախորդ

[3] *Տե՛ս Г.А. Арутюнян,* «Распад системы и формирование будущего», с. 78, НОФ «Нораванк», Ереван, 2011.

[4] Իհարկե, «սոցիալիստական ճամբարի» հանդեպ վերահսկողության քաղաքականությունը երբեմն վարվում էր բավական կոշտ, և բանը հասնում էր զինված միջամտության. բավական է հիշել խորհրդային զորքեր մտցնելը Հունգարիա (1956թ.) և Չեխոսլովակիա (1968թ.): Բայց անգամ այդ իրադարձություններից հետո Հունգարիայի և Չեխոսլովակիայի ավելի քան անկախ կարգավիճակը պահպանվեց նախկին մակարդակին: Այս համատեքստում օգտակար է ծանոթանալ Ն.Ա. Բերդյաևի փիլիսոփայական ժառանգությանը, մասնավորապես՝ «Ռուսական կոմունիզմի ակունքները և իմաստը» գրքին *(http://www.vehi.net/berdyaev/istoki/vehi.net.berdyaev/istoki)*՝ գրված դեռևս 1937թ.:

Ռուսական կայսրությունն իր առաքելությունն էր համարում քրիստոնյա ժողովուրդների ազատագրումը մուսուլմանական լծից, և այդ երկրների թվին, օրինակ, Բուլղարիայի կողքին, պետք է դասել նաև Արևելյան Հայաստանը: Շարունակելով քաղաքակրթական ավանդույթը՝ Հայրենական մեծ պատերազմի ընթացքում ԽՍՀՄ-ը նացիստներից ազատագրեց Եվրոպայի կեսը: Այսօր այդ առաքելությունը շարունակում է կատարել ՌԴ-ն Սիրիայում:

Վերը նշվածի առնչությամբ նշենք, որ «կայսրություն» հասկացությունը միշտ չէ, որ պետք է մեկնաբանել որպես չարիքի կենտրոն, և հարկ է այն դիտարկել որպես մի ինչ-որ բազմազգ պետական համակարգ: Օրինակ, ԱՄՆ-ը դասական կայսրություն է, որը, ինչպես կարծում է ամերիկյան իսթեբլիշմենթը, Հռոմեական կայսրության ժամանակակից անալոգն է (հատկանշական է, որ ԱՄՆ-ում ստեղծվել է հատուկ հանձնաժողով այդ կայսրության անկման պատճառների հետազոտման համար, որպեսզի այսօր չկրկնեն հռոմեացիների գործած սխալները): Փոքր-ինչ յուրատեսակ կայսրություն է նաև ԵՄ-ը, որը նույնպես շատերը զուգակցում են անտիկ կայսրությունների հետ: Կայսրություններում ապրող ժողովուրդների չափորոշիչը նրանց հոգևոր-մշակութային և մտավոր զարգացման հնարավորությունների աստիճանն է: Ասվածից ելնելով՝ բնավ զարմանալի չէ, որ եվրասիական ընկերակցության հայեցակարգերը ծնունդ են առել ռուսական ինտելեկտուալ միջավայրում:

Պատմականորեն եվրասիականության հայեցակարգը ձևավորվել է 20-ական թվականներին ռուսական էմիգրանտական միջավայրում (Ն.Ս. Տրուբեցկոյ, Պ.Ն. Սավիցկի, Ի.Ն. Ալեքսեև և այլք), որպես Ռուսաստանի՝ իբրև Ռուսական կայսրությունից մինչև ԽՍՀՄ միասնական և, ըստ էության, անընդմեջ գործընթացի քաղաքական-սոցիալական, մշակութային և աշխարհաքաղաքական զարգացման տրամաբանությունը հասկանալու փորձ: Եվրասիականության հիմնադիր հայրերը բարձր էին գնահատում Ռուսաստանի բազմազգ կացութաձևը և, ելնելով դրանից, համարում էին, որ հենց Ռուսաստանն էլ պետք է հանդես գա որպես առաջնորդ եվրասիական ժողովուրդների ինտեգրման և նրանց բարգավաճման համար: Սրա կողքին, եվրասիացիները, վտարանդի լինելով Եվրո-

պայում, փորձում էին հասկանալ նաև Արևմուտքի դերը համաշխարհային զարգացման մեջ: Նրանք եկան մի փոքր կտրական եզրահանգման, այն է՝ Եվրասիայի ժողովուրդները պետք է հանդես գան ընդդեմ ունիտար, տոտալիտար արևմտյան մոդելի, ընդդեմ Արևմուտքի տնտեսական, քաղաքական և մշակութային գերիշխանության, և Ռուսաստանը եվրասիացիներին համաշխարհային այդ գործընթացի ավանգարդն էր թվում: Նշենք, որ վաղ եվրասիական հայեցակարգի գաղափարական ողջ արժեքով հանդերձ՝ այս գաղափարախոսության առաջմղման գործընթացն ընդհատվեց վտարանդի եվրասիացիների առաջնորդ, իշխան Տրուբեցկոյի մահվամբ:

Միևնույն ժամանակ, ԽՍՀՄ փլուզմամբ եվրասիական կոնցեպտները նոր զարգացում ձեռք բերեցին: Դա պայմանավորված էր այն մեծ հիասթափությամբ, որը համակեց կոմունիստական գաղափարախոսության գրեթե բոլոր հակառակորդներին երկրի համատարած լիբերալացումից հետո: Մշակույթի, գիտության և տեխնոլոգիաների, կենսագործունեության մյուս գրեթե բոլոր ոլորտների անկումը ստիպեց նրանց վերիմաստավորել իրենց հայացքները և մոտեցումները գաղափարախոսական հարցերում: Հենց այդ շրջանում ի հայտ եկան Ա.Պանարինի, Ա.Զինովևի և Ա.Դուգինի, ուրիշ շատերի մի շարք արժեքավոր աշխատությունները[5] որոնք, ըստ էության, հասարակության և պետության կառուցման հրահանգներ էին՝ պատմական բոլոր ձեռքբերումների և ավանդույթների հաշվառմամբ: Հարկ է նշել, որ խոսքն, ընդ որում, չէր վերաբերում խորհրդային համակարգի իդեալականացմանը, որի հիմնական թերություններից մեկը կոմունիստական հասարակական-հումանիտար և գաղափարախոսական կոնցեպտների այլընտրանքի լիակատար արհամարհումն էր (ինչն արդյունքում ԽՍՀՄ փլուզման հիմնական պատճառներից մեկը հանդիսացավ):

Ռուսաստանի նոր առաջնորդներն ավելի ընկալունակ գտնվեցին նորարարությունների (որոնք իրականում հաճախ լավ մոռացված հներն

[5] Տե՛ս, օրինակ, *А.С. Панарин,* Реванш истории: российская стратегическая инициатива XXI веке, М., Издательская корпорация «Логос», 1998, *Ал.Зиновьев,* http://bookscafe.net/author/zinovev_aleksandr-385.html, *Ал.Дугин,* http://royallib.com/author/dugin_aleksandr.html

են) հանդեպ, և դրա շնորհիվ առաջ քաշվեց «հետխորհրդային նեոեվրասիականության» գաղափարը, ԵԱՏՄ ինտեգրացիոն նախագծի իրագործման գործնական մեծ աշխատանք կատարվեց։ Զարմանալի չէ, որ այդ նախագիծն արդեն նախնական փուլում հանդիպեց արևմտյան առաջնորդների կոշտ դիմադրությանը, ովքեր դրանում Խորհրդային Միության վերականգնման փորձ էին տեսնում։

Ակնհայտ է, որ Եվրասիական ինտեգրման նախագիծն այնքան էլ հարթ չի ընթանում, և այստեղ շատ լուրջ խնդիրներ կան։ Ամենագլխավոր խնդիրը, մեր կարծիքով, անբավարար ուշադրությունն է գիտության, տեխնոլոգիաների և կրթության հարցերին. բավական է նշել, որ այս ոլորտում ԱՄՆ-ը տասնապատիկ ավելին է ծախսում, քան Ռուսաստանը (համապատասխանաբար՝ $500 մլրդ և $50 մլրդ)։ Մինչդեռ, այս հանգամանքը կանխորոշում է ոչ միայն տեխնոլոգիական զարգացումը, այլև որոշումներ ընդունող կադրային կազմի ինտելեկտուալ-հոգևոր մակարդակը։ Այս նույն համատեքստում նշենք նաև մեկ այլ հանգամանք. անհրաժեշտ գիտելիքների բացակայության պայմաններում ծագում է այսպես կոչված «վայ-հայրենասիրությունը» (որի նշանները հստակ երևում են ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Հայաստանում), ինչը կարող է սոսկ վնասել ընդհանուր գործին։

ՖԻՔՍՎԱԾ ԼԱՅՆԱՇԵՐՏ ԿԱՊԻ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ. ՓԱՍՏԵՐ*

*Արա Մարջանյան***

Սույն հոդվածը մեր նախորդ հրապարակման [1] շարունակությունն է՝ նվիրված Հայաստանում կապի և ինֆորմացիոն տեխնոլոգիաների (*ԻԿՏ*, *ICT*) ոլորտի ցուցանիշների ներկայացմանն ու վերլուծությանը, համահունչ «Հայաստան - Ադրբեջան. կրիտիկական ենթակառուցվածքներ» «Նորավանք» ԳԿՀ թեմայի մոտեցումներին: Նախորդ հրապարակումը նվիրված էր ֆիքսված լայնաշերտ[1] կապի (ՖԼԿ) բաժանորդների (ՖԼԿԲ) ցուցանիշի քննարկմանը: Ստորև դիտարկվում են Հայաստանում և տարածաշրջանում ՖԼԿ արագագործությանն առնչվող երկու կարևորագույն ցուցանիշներ. ֆիքսված լայնաշերտ կապի հզորությունը (*capacity*) և դրա արագությունը (*speed*)[2]:

Ֆիքսված լայնաշերտ կապի հզորությունը

Սկսենք սահմանումներից և եզրաբանությունից, քանի որ հայկական պաշտոնական աղբյուրներում[3] կիրառվող արտահայտությունները և եզրերը (տերմինները) խճողված են, հաճախ՝ անհամարժեք [1]: Խոսելով տվյալ երկրում ՖԼԿ-ի մասին՝ անհրաժեշտ է տարբերակել դրա հզորու-

---

* Սկիզբը՝ Գլոբուս, թիվ 7 (86), 2017:

** «Նորավանք» ԳԿՀ առաջատար վերլուծաբան, տ.գ.թ., ա.գ.ա., ՄԱԿ ԶԾ ազգային փորձագետ (էներգետիկա, տրանսպորտ):

[1] *Fixed broadband.*

[2] ՖԼԿ արագագործության մյուս ասպեկտին՝ ուշացմանը (*latency, задержка*) կանդրադառնանք շարքի հաջորդ բաժիններում, տարածաշրջանում տվյալների կենտրոնների (*data centers*) զարգացումը քննելիս:

[3] ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն (ՏԿՏՏՆ), ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (ՀԾԿՀ):

թյունը (*Broadband capacity*) ՖԼԿ բուն արագությունից (*speed*): Որոշակի շփոթ կարող է առաջացնել այն հանգամանքը, որ այս երկու պարամետրերն էլ ունեն միևնույն չափողականությունը՝ բիտ[4] մեկ վայրկյանում (բ/վ): Սակայն գործընթացների էությունը ճիշտ ընկալելու առումով կարևոր է մշտապես մտապահել դրանց տարբերությունը:

Տվյալ երկրի ՖԼԿ համակարգը արտաքինից դիտարկելիս, օրինակ՝ միջազգային կապուղիների (մալուխային, արբանյակային, ռադիո) առնչությամբ[5], կամ երկրի ՖԼԿ ենթակառուցվածքն ամբողջական առումով քննելիս, կիրառում են թողունակություն կամ հզորություն (*capacity*) եզրը: Սույն հոդվածում օգտագործվում է «հզորություն» տարբերակը: Սա արվում է՝ նախևառաջ ընդգծելու համար ՖԼԿ գենետիկ կապն էլեկտրակապի և ընդհանրապես՝ էլեկտրաէներգետիկայի հետ: Բացի այդ, այսպիսի թարգմանությունն ավելի համարժեք է թե՛ լեզվական, թե՛ տեխնիկական առումներով և թույլ է տալիս խուսափել ՀՀ պաշտոնական և մասնագիտական աղբյուրներում ներկայում օգտագործվող անհամարժեք արտահայտություններից (տե՛ս ստորև):

Տարբերում են երկրի ՖԼԿ նախագծային (*Design*), տեղակայված (*Equipped*), վաճառված (*Sold*) և օգտագործվող (*Utilized*) հզորությունները: Հաջորդականությունը բերում ենք ըստ իրական կյանքում դրանց արժեքների նվազման: ՖԼԿ տեղակայված հզորությունն անգլերեն մասնագիտական *ժարգոնով* հաճախ անվանում են *Lit capacity,* այսինքն՝ «լուսավորված հզորություն»[6]: Առաջնահերթ կարևորություն ունի ՖԼԿ տեղակայված տեսակարար հզորություն (ՖԼԿ ՏՏՀ) ցուցանիշը՝ բերված երկրի բնակչության մեկ շնչի հաշով (բ/վ/մարդ): Այն ֆիքսվում է ԻԿՏ ոլորտի գլոբալ զրադարաններում [2] և օգտագործվում երկրների ու տարածաշրջանների ՖԼԿ համեմատական վերլուծությունների ժամանակ:

ՖԼԿ բուն արագության մասին խոսվում է հիմնականում երկրի ներսում դիտարկումների ժամանակ, ՖԼԿ կոնկրետ տեխնոլոգիական ցան-

[4] Կիլոբիտ (կբ) կամ Մեգաբիտ (Մբ), Գիգաբիտ (Գբ), Տերաբիտ (Տբ) և այլն: Այստեղ նկատի են ունենում ինֆորմացիայի արդեն օպտիմալ խտացված հոսքը (*optimally compressed flow*):

[5] Այս կարևոր հարցին հատուկ կանդրադառնանք հաջորդ հրապարակումներում:

[6] Ինչը համարժեք է էներգետիկների «լարման տակ գտնվող հզորությանը»:

ցերի կամ մատուցվող ծառայությունների պարագայում: Վերջին դեպքում տարբերակում են ՖԼԿ «գովազդվող արագություն» (գ.ա., *advertised speed*) կամ «բաժանորդագրման արագություն» (բ.ա., *subscribed speed*) հասկացությունները ՖԼԿ իրական արագությունից:

Աղյուսակ 1

ՖԼԿ հզորությունը Հայաստանում
(աղբյուրները՝ ՀՀ ՏԿՏՏՆ [3, 5], ՀԾԿՀ, [4], սեփական հաշվարկներ)

Ցուցանիշներ, վերտառությունը՝ ըստ աղբյուրների	2013	2014	2015	2016
1. Օգտագործված միջազգային ինտերնետ կապի թողունակությունը (հոսքը)՝ ըստ ՏԿՏՏՆ [3], Մբ/վ (ՖԼԿ օգտագործված հզորություն)	45 600	61 528	118 187	
2. Լիտ/հագեցվածությամբ միջազգային ինտերնետ կապի թողունակությունը՝ ըստ ՏԿՏՏՆ [3], Մբ/վ (ՖԼԿ տեղակայված հզորություն)	76 000	87 897	158 201	
3. «Միջազգային IP տարանցման ծառայությունների հոսքերի թողունակություն», ՀՀ ՀԾԿՀ [4], Մբ/վ (ՖԼԿ տեղակայված հզորություն)	76 000	87 897	161 524	331 000
4. ՀՀ բնակչությունը՝ ըստ ՏԿՏՏՆ [5], վերահողումը՝ ՀՀ ԱՎԾ, մլն մարդ	3.024	3.022	3.021	2.998
5. ՖԼԿ տեղակայված տեսակարար հզորություն, կբ/վ/մարդ	**25.13**	**29.09**	**53.47**	**110.41**
6. ՖԼԿ տեղակայված հզորության օգտագործման գործակից, %	**60.0%**	**70.0%**	**74.7%**	

Աղյուսակ 1-ում (առաջին 3 տող) ամբողջացնում ենք պաշտոնական աղբյուրներում Հայաստանի ՖԼԿ հզորությանն առնչվող և 2017թ. օգոստոսի դրությամբ հասանելի *բոլոր* տվյալները [3, 4], ցուցանիշների վերտառությունը՝ ըստ համապատասխան աղբյուրների: Փակագծերում բերում ենք դրանց հայերեն համարժեք արտահայտությունները: 4-րդ տողում բերում ենք ՀՀ բնակչության մասին պաշտոնական տվյալները, որոնք օգտագործվում են ՏԿՏՏՆ-ի կողմից, հղում կատարելով ՀՀ ԱՎԾ-ին [5]: 5-րդ տողում հաշվարկում ենք ՖԼԿ ՏՏՀ-ն՝ կբ/վ/մարդ չափողականությամբ, քանի որ, ինչպես և ՖԼԿԲ պարագայում [1], այս տեսակարար ցուցանիշը չի բերվում ՀՀ պաշտոնական որևէ աղբյուրում: Վերջապես, աղյուսակի 6-րդ

տողում հաշվարկում ենք ՖԼԿ տեղակայված հզորության օգտագործման գործակիցը (*Capacity factor,* %): Ոլորտի զարգացման արդյունավետությունը բնութագրող այս կարևորագույն ցուցանիշը ՖԼԿ տեղակայված և օգտագործված հզորությունների հարաբերակցությունն է (%) և քաջ ծանոթ էլեկտրաէներգետիկայի ոլորտի յուրաքանչյուր մասնագետի[7]:

Ինչպես տեսնում ենք, ՏԿՏՏՆ հաշվետվություններում «ՖԼԿ տեղակայված հզորություն» հասկացության փոխարեն օգտագործվում է «Լիտ/հագեցվածությամբ միջազգային ինտերնետ կապի թողունակություն» անհասկանալի արտահայտությունը, որն անգլերեն «*Lit capacity*»-ի ուղղակի *տրանսլիտերացիան* է (հնչյունակրկնությունը)[8]: Նույն այս ցուցանիշը ՀԾԿՀ գործունեության մասին տարեկան հաշվետվություններում անվանվում է «Միջազգային *IP* տարանցման ծառայությունների հոսքերի թողունակություն»: Ընդ որում, 2015թ. համար դրա արժեքը (161 524 Մբ/վ) տարբերվում է ՏԿՏՏՆ նույն տարվա արժեքից (158 201 Մբ/վ), առանց որևէ բացատրության: 2016-ի համար ՀԾԿՀ-ն այս ցուցանիշի գծով բերում է 331 000 Մբ/վ արժեքը, թեև 2017թ. օգոստոսի դրությամբ ՏԿՏՏՆ հաշվետվություններում և կայքէջում բացակայում էր 2016թ. համար այս ցուցանիշի որևէ գնահատական: Բոլոր այս խնդիրների և անհարթությունների հետ մեկտեղ, բերված տվյալները վկայում են ՖԼԿ հզորության առումով Հայաստանում վերջին տարիներին արձանագրված ոգևորիչ առաջխաղացման մասին:

Իսկապես, 2015-ին Հայաստանում ՖԼԿ օգտագործված հզորությունը (մոտ 118.2 Գբ/վ) նախորդ տարվա համեմատ (մոտ 61.5 Գբ/վ) գրեթե կրկնապատկվել է: Պատկերը նույնն է նաև ՖԼԿ տեղակայված հզորության առումով՝ մոտ 158.2 Գբ/վ 2015-ին, 2014-ի մոտ 87.9 Գբ/վ-ի դիմաց: ՖԼԿ տեղակայված հզորության օգտագործման գործակցի առումով անցած տարիների առաջխաղացումը նույնպես տպավորիչ է, այն 2013թ. 60%-ից աճել է մինչև մոտ 75%՝ 2015-ին[9]: Առաջխաղացումը նույնիսկ

[7] Սա է պատճառներից մեկը, որ capacity եզրը թարգմանում ենք որպես հզորություն, այլ ոչ թե (թող)ունակություն: Ավելի խորքային պատճառը կայանում է նրանում, որ կապուղու թողունակության (capacity) Շենոնի դասական ձևակերպումում (1948թ.), սահմանի նշանի տակ հարաբերությունը բերվում է միջին հզորության:

[8] Մեզանում տեխնիկական ոլորտների հայերեն եզրաբանության ծանր վիճակի մասին տե՛ս [6]:

[9] Համեմատության համար նշենք, որ, օրինակ, ՀՀ ամենաբարդ և ամենակարևոր օբյեկտի՝ Հայկական ատոմակայանի տեղակայված հզորության օգտագործման գործակիցը 2013-15թթ. կազմել է միջինը 67%:

ավելի տպավորիչ է 2016-ի համար, եթե որպես իրողություն ընդունենք այդ տարվա համար ՀԾԿՀ-ի կողմից բերվող 331.0 Գբ/վ ցուցանիշը: Սա նշանակում է, որ այդ տարի ՖԼԿ ՏՏՀ-ն Հայաստանի համար կազմել է 110.41 կբ/վ/մարդ, և 2013-ի համեմատ այն աճել է ավելի քան 4 անգամ:

Աղյուսակ 2

ՖԼԿ տեղակայված տեսակարար հզորությունն աշխարհում, 2015թ. վերջի դրությամբ (աղբյուրը՝ [7])

Աշխարհագրական տարածաշրջանների ՖԼԿ միջին ՏՏՀ, կբ/վ/մարդ		Գլոբալ տարածաշրջանների ՖԼԿ միջին ՏՏՀ, կբ/վ/մարդ	
Եվրոպա	**131**	Զարգացած երկրների միջինը	**93**
Ամերիկաներ	**46**	Զարգացող երկրների միջինը	**13**
ԱՊՀ	**24**	Նվազագույն զարգացած երկրներ	**1**
Արաբական երկրներ	**15**		
Ասիա և ԽՕՏ	**13**		
Աֆրիկա	**6**		

Պատկերն ավելի ակնառու դարձնելու համար Հայաստանի ցուցանիշները դիտարկենք ավելի լայն համատեքստում: *Աղյուսակ 2*-ում ամբողջացնում ենք 2015-ի վերջի դրությամբ աշխարհի 6 աշխարհագրական տարածաշրջանների (ձախից) և գլոբալ տարածաշրջանների համար (աջից) ՖԼԿ ՏՏՀ միջին արժեքներն ըստ ՀՄՄ 2016թ. տարեկան ամփոփագրի [7]: Ինչպես տեսնում ենք, 2015-ի իր ցուցանիշով (53.47 կբ/վ/մարդ) Հայաստանն էականորեն առաջ էր անցել աշխարհի 6 աշխարհագրական տարածաշրջաններից 5-ի միջին ցուցանիշներից: Մասնավորապես, գերազանցությունը ԱՊՀ միջին ցուցանիշի նկատմամբ կազմել էր ավելի քան երկու անգամ, արաբական երկրների հանդեպ՝ ավելի քան 3.5 անգամ, ԱԽՕՏ-ի հանդեպ՝ ավելի քան 4 անգամ: Հայաստանն այս ցուցանիշով զիջում էր միայն Եվրոպային՝ 131 կբ/վ/մարդ: Բացի այդ, 2015-ին Հայաստանի ՖԼԿ ՏՏՀ ցուցանիշն ավելի քան 4 անգամ գերազանցում էր Զարգացող երկրներին (13 կբ/վ/մարդ) և զիջում զարգացած երկրներին 43%-ով:

Իսկ արդեն 2016-ին ՏՏՀ իր ցուցանիշով (110.43 կբ/վ/մարդ) Հայաստանն ընդհուպ մոտեցել է Եվրոպայի 2015-ի ցուցանիշին (131 կբ/վ/մարդ)

և նույնիսկ մոտ 18%-ով գերազանցել Զարգացած երկրների 2015թ. ՏՏՀ միջին ցուցանիշը (93 կբ/վ/մարդ): Ցավոք, ՀՄՄ 2017թ. տարեկան ամփոփագրում [8] 2016թ. ՖԼԿ ՏՏՀ գլոբալ միջին ցուցանիշներն արդեն բերվում են փոփոխված չափողականությամբ[10]: Ուստի, դրանք այլևս համադրելի չեն ՀՄՄ նախկին տարեկան ամփոփագրերում բերվող ցուցանիշների հետ: Բացի այդ, ինչպես նշել էինք վերը, ՀՄՄ առցանց գրադարանում երկրների ՏՏՀ-ի մասին տվյալները հասանելի են միայն հատուկ լիազորությամբ բաժանորդների համար: Ուստի, այստեղ չենք կարող կառուցել տարածաշրջանի երկրների ՖԼԿ ՏՏՀ կորերը, ինչպես որ դա անում էինք, օրինակ, ՖԼԿԲ/100 հոգի ցուցանիշի համար մեր նախորդ հրապարակումում (տե՛ս [1], *Գծապատկեր 1*): ՖԼԿ ՏՏՀ պարագայում ստիպված ենք օգտվել այլ հավաստի աղբյուրներից: Նշենք, որ ադրբեջանական պաշտոնական աղբյուրներն այդպիսին չեն, և ահա թե ինչու:

Անցած 7 տարիների ընթացքում *ԻԿՏ* ոլորտի առնչությամբ Ադրբեջանի Ազգային վիճակագրության ծառայությունը չի բերել և չի բերում *ոչ մի* տվյալ՝ ուղիղ, ֆիզիկական չափողականությամբ: Բերվում են *ԻԿՏ* ոլորտի 19 ցուցանիշների *միայն* տարեկան փոփոխությունները՝ %-ով[11]: Իսկ թե ինչից են այդ տոկոսներն ի վերջո՝ մնում է անհայտ[12]: Եվ անգամ այս պարագայում այս 19 ցուցանիշների շարքում չկա ՖԼԿ տեղակայված հզորությանն առնչվող և ոչ մի ցուցանիշ: Բացի այդ, 2017թ. օգոստոսի դրությամբ Ադրբեջանի կապի և ինֆորմացիոն (բարձր) տեխնոլոգիաների նախարարության պաշտոնական հաշվետվությունները հասանելի են միայն առ 2014թ.: Եվ դրանցում չի բերվում ՖԼԿ տեղակայված հզորությանն առնչվող ոչ մի ուղիղ տվյալ: Բացառություն է կազմում 2013թ. և 2014թ. հաշվետվություններում առանց որևէ մեկնաբանության և բացատրության բերվող երկու գրաֆիկ, որոնք բերում ենք *Նկար 1*-ում: Դրանք պատկերում են *«Scope of Internet channels per 100 inhabitants»* (2013թ., [9])

[10] Դրանք հարաբերակցվում են ոչ թե տվյալ երկրի կամ տարածաշրջանի բնակչության թվին (կբ/վ/մարդ), այլ ինտերնետ օգտատերերի (ի.օ.) թվին (կբ/վ/ի.օ.) և այսպիսով՝ արհեստականորեն մեծացվում (ի.օ. թիվը ավելի փոքր է բնակչության թվից, սահմանում՝ հավասար):

[11] https://www.azstat.org. Core indicators on ICT systems and use in households.

[12] Խորհրդային վիճակագրության «հնարքներին» ծանոթ մասնագետները կհասկանան այս երևույթի ծագումնաբանությունը:

«Scope of Internet channels per 100 Internet users» (2014թ., [10]) վերտառությամբ և կբ/վ (kbps) չափողականությամբ ցուցանիշների կորերը[13]: Հատկանշականն այստեղ այն է, որ թեև այս ցուցանիշներն ունեն միևնույն թվային արժեքները, դրանց չափողականությունն իրականում տարբեր է՝ մի դեպքում կբ/վ/մարդ [9], մյուս դեպքում՝ կբ/վ/ի.օ [10]:

Նկար 1

Ադրբեջանական պաշտոնական աղբյուրներում ՖԼԿ հզորության առնչվող միակ գրաֆիկները, 2013թ. (ձախից, [9]) և 2014թ. (աջից, [10])





Բայց եթե, օրինակ, իրավացի է այս ցուցանիշի 4187 կբ/վ/100 ի.օ. չափողականությամբ գնահատականը՝ բերված [10]-ում 2012թ. համար, ապա դա համարժեք է այդ տարի 269 Գբ/վ ՖԼԿ տեղակայված հզորությանը, քանի որ Ադրբեջանի բնակչությունը 2012-ին՝ ըստ պաշտոնական գնահատականի, կազմել էր 9.235 մլն մարդ, իսկ համաձայն ՀՄՄ-ի, այդ տարի Ադրբեջանում ի.օ. մասնաբաժինը կազմել էր բնակչության 70%-ը (այսինքն՝ մոտ 6.44 մլն ի.օ.): Հետևաբար, ՖԼԿ ՏՏՀ ցուցանիշն Ադրբեջանում 2012-ին կազմել էր 29.15 կբ/վ/մարդ: Իսկ եթե իրավացի է [9]-ում այդ նույն տարվա համար այս ցուցանիշի 4187 կբ/վ/100 մարդ չափողականությամբ գնահատականը, ապա դա նշանակում է արդեն 387 Գբ/վ ՖԼԿ տեղակայված հզորություն և 41.87 կբ/վ/մարդ ՖԼԿ ՏՏՀ 2012-ին: Այսինքն՝ մոտ 44%-ով ավելի, քան նախորդ դեպքում:

[13] Ինչպես տեսնում ենք, *ԻԳՏ* ոլորտի և ՖԼԿ-ին առնչվող տերմինաբանության խնդիրը լուրջ է նաև Ադրբեջանում:

Ըստ ՀՄՄ տվյալների, 2014-ին Ադրբեջանում ի.օ. մասնաբաժինը կազմել է 75% (կամ 7.1 մլն ի.օ.), և հիմք ընդունելով [10]-ում բերվող 6036.1 կբ/վ/100 ի.օ. ցուցանիշը՝ կստացվի, որ 2014-ին Ադրբեջանում ՖԼԿ տեղակայված հզորությունը կազմել է մոտ 429 Գբ/վ: Զավեշտալին այն է, որ այդ նույն՝ 2014թ. հաշվետվության ներածականում Ադրբեջանի կապի և բարձր տեխնոլոգիաների նախարարը պնդում է, որ *«the capacity of International Internet channels [in Azerbaijan] reached up to 330 Gbps in 2014»* ([10], p. 5): Սա ուռճացումների մասին ակամա խոստովանություն է: Ահա այսպես, առանց այլևայլության, վերտառության աննշան փոփոխությամբ ուռճացվում են ՖԼԿ ՏՏՀ ցուցանիշի արժեքները *ԻԿՏ* ոլորտի ադրբեջանական պաշտոնական հրապարակումներում[14]:

Չխորանալով *ԻԿՏ* ոլորտում ադրբեջանական պաշտոնական զեղծարարությունների մեջ[15]՝ նկատենք միայն, որ համաձայն հավաստի աղբյուրների, Ադրբեջանի ՖԼԿ տեղակայված հզորությունը 2012-ի վերջին կազմել էր 205.0 Գբ/վ ([11], Table 2, p. 11): Թեև այն մոտ 2.7 անգամ ավելին էր Հայաստանի այդ տարվա ցուցանիշից (76.0 Գբ/վ, տե՛ս *Աղյուսակ 1*, տող 3), սակայն ՖԼԿ ՏՏՀ արժեքով Ադրբեջանի ցուցանիշը (22.4 կբ/վ/մարդ, տես՛ [11], Table 2, p. 11) զիջում էր Հայաստանին (25.13 կբ/վ/մարդ, տե՛ս *Աղյուսակ 1*, տող 5) դեռ այդ ժամանակ[16]: Մեծ հավանականությամբ կարելի է ենթադրել, որ Համաշխարհային բանկի 2014-15թթ. հաշվետվություններում [12] և ադրբեջանական մամուլում [13] քանիցս արտահայտված այն կարծիքը, թե «գործընթացների ներկայիս միտումնե-

[14] Այս իրադրությունը ճշգրտորեն կրկնում է Ադրբեջանում ժողովրդագրական վիճակագրության և պաշտոնական այլ ցուցանիշների զանգվածային խեղաթյուրումների մեխանիզմը, ինչին անդրադարձել էինք մեր ավելի վաղ հրապարակումներում՝ զետեղված «Նորավանք» հիմնադրամի կայքում:

[15] Այստեղ մի կողմ ենք թողնում այն հանգամանքը, որ սկսած 2013-ից՝ ոչ մի պաշտոնական ադրբեջանական կայք հասանելի չէ հայկական գրանցում ունեցող *IP* հասցեի համար: Այս արտառոց իրավիճակի քննությունը դուրս է մեր հոդվածի շրջանակներից, թեև հույս ունենք, որ ի վերջո դրան կանդրադառնան համացանցում տեղեկատվության ազատության կողմնակիցները և այդ ազատությունը գնահատող կառույցները: Հատկապես՝ բրիտանական ծագում ունեցող և Ադրբեջանի պաշտոնական վիճակագրական տվյալներին ապշեցուցիչ բարձր գնահատական տվող կազմակերպությունները [14]:

[16] Համաձայն [11]-ի, 2012-ի վերջին Ռուսաստանի Դաշնության ՖԼԿ ՏՏՀ-ն կազմել էր 17.4 կբ/վ/մարդ, Ղազախստանինը՝ 16.5 կբ/վ/մարդ, Ղրղզստանինը՝ 0.893 կբ/վ/մարդ, Տաջիկստանինը՝ 0.313 կբ/վ/մարդ, Ուզբեկստանինը՝ 0.259 կբ/վ/մարդ և Թուրքմենստանինը՝ 0.12 կբ/վ/մարդ:

րի պահպանման դեպքում Ադրբեջանն իր ՖԼԿ ցուցանիշներով 2017-ին կհասնի զարգացած երկներին», խափանված է: Գոնե միայն այն պատճառով, որ այսօր, ինչպես և երեկ, բացակայում է Ադրբեջանում ՖԼԿ հզորությանն առնչվող որևէ հավաստի գնահատական:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա, ինչպես նշել էինք վերը, ցավոք, չենք կարող անմիջականորեն համադրել ՀՀ 2016-ի ցուցանիշը ՀՄՄ այս տարվա տարեկան ամփոփագրի ցուցանիշների հետ [8]: Եվ դա՝ միայն այն բանի հետևանքով, որ կարծես հետևելով ադրբեջանական պաշտոնական աղբյուրների օրինակին՝ ՀՄՄ 2017թ. տարեկան ամփոփագրում ՖԼԿ ՏՏՀ գլոբալ միջին ցուցանիշները բերվում են կբ/վ/ի.օ., այլ ոչ թե կբ/վ/մարդ չափողականությամբ: Չվարանելով այս նորամուծությունից՝ Հայաստանի 2016թ. ՖԼԿ ՏՏՀ ցուցանիշը նույնպես բերենք այս չափողականությամբ: Դրա համար մեզ անհրաժեշտ է Հայաստանում ի.օ. մասնաբաժնի գնահատականը: Համաձայն ՀՄՄ գրադարանի, 2016-ին այն կազմել է 62%[17]: Այսինքն՝ հաշվի առնելով ՀՀ բնակչության 2016թ. պաշտոնական թիվը (տե՛ս *Աղյուսակ 1*, տող 4), այն կկազմի 1.859 մլն ի.օ.: Հաշվի առնելով 2016-ին Հայաստանում ՖԼԿ տեղակայված հզորության ցուցանիշը (331 Գբ/վ, *Աղյուսակ* 1, տող 3) մեկ ի.օ. հաշվով, Հայաստանում այն կկազմի 178 կբ/վ/ի.օ.:

Աղյուսակ 3

ՖԼԿ տեղակայված հզորությունն աշխարհում մեկ ինտերնետ օգտատերի (ի.օ.) հաշվով, 2016թ. (աղբյուրը՝[8])

Աշխարհագրական տարածաշրջանների ՖԼԿ միջին ՏՏՀ, կբ / վ / ի.օ. 2016թ.		Գլոբալ տարածաշրջանների ՖԼԿ միջին ՏՏՀ, կբ / վ / ի.օ. 2016թ.	
Եվրոպա	**178**	Զարգացած երկրների միջինը	**140**
Ամերիկաներ	**91**	Զարգացող երկրների միջինը	**53**
ԱՊՀ	**59**	Նվազագույն զարգացած երկրներ	**6**
Արաբական երկրներ	**51**		
ԱԽՕՏ	**48**		
Աֆրիկա	**39**		

[17] http://www.itu.int/en/ITU-D/Statistics/Pages/stat/default.aspx

Այժմ արդեն կարող ենք համադրել Հայաստանի այս ցուցանիշը ՀՄՄ 2017թ. ամփոփագրում [8] բերվող աշխարհի տարածաշրջանների միջին ցուցանիշների հետ, տե՛ս *Աղյուսակ 3*: Ինչպես տեսնում ենք, 2016-ին Հայաստանը ՖԼԿ ՏՏՀ իր 178 կբ/վ/ի.օ. ցուցանիշով հավասարվել է Եվրոպայի միջին ցուցանիշին և շարունակում է էականորեն առաջ անցել աշխարհի մնացած 5 աշխարհագրական տարածաշրջաններից: Բացի այդ, 2016-ին այս ցուցանիշով Հայաստանն առաջ է անցել զարգացած երկրներից՝ գերազանցելով դրանց միջին ցուցանիշը (140 կբ/վ/ի.օ.) մոտ 27%-ով:

Ֆիքսված լայնաշերտ կապի արագությունը

Հայաստանում ՖԼԿ արագության մասին տվյալները բերվում են միայն ՏԿՏՏՆ 2013-15թթ. գործունեության մասին հաշվետվության թիվ 1 Հավելվածում [3]: Դրանք ներկայացվում են ՀՄՄ-ի կողմից մշակված ձևաչափով, այսինքն՝ ՖԼԿ բաժանորդների թվով, դասակարգված ըստ ՖԼԿ բաժանորդագրման արագության (բ.ա.) 3 տիրույթների՝ 256 կբ/վ-ից մինչև 2.0 Մբ/վ, 2.0 Մբ/վ-ից մինչև 10.0 Մբ/վ, բ.ա. և 10.0 Մբ/վ և ավելի բ.ա. ՖԼԿ բաժանորդների թիվ ([3], ՀՄՄ կոդ՝ 4213, տողեր 21-23): *Աղյուսակ 4*-ի առաջին 4 տողերում ամբողջացնում ենք այդ տվյալները 2013-15թթ. համար: ՀՀ ՀԾԿՀ կայքում և հաշվետվություններում այդ մասին տվյալները բացակայում են: Չեն բերվում նաև ՖԼԿԲ տեսակարար ցուցանիշները ըստ ՖԼԿ բ.ա. նշված 3 տիրույթների, ինչպես նաև դրանց տոկոսային բաղադրությունը: Լրացնելու համար այս բացը՝ *Աղյուսակ 4*-ում հաշվարկում ենք այս ցուցանիշները[18]:

[18] Ադրբեջանական պաշտոնական աղբյուրների հրապարակումներում [9, 10] և կայքէջերում (https://www.azstat.org, www.mincom.gov.az) ՖԼԿ բ.ա. մասին տվյալները երբևիցե չեն բերվել: Կրկին հրավիրում ենք ՀՄՄ և [14] փորձագետների ուշադրությունն այս հանգամանքի վրա:

Աղյուսակ 4

ՖԼԿ բաժանորդների թիվն ըստ ՖԼԿ բ. ա. երեք տիրույթների
(աղբյուրը՝ ՀՀ ՏԿՏՏՆ [3], սեփական հաշվարկներ)

Ցուցանիշներ	2013	2014	2015
ՖԼԿԲ բացարձակ թիվը ([3], տողեր 21-23)			
256 կբ/վ-ից 2.0 Մբ/վ, բ.ա. բաժանորդ, հատ	95 406	84 024	3 341
2.0 Մբ/վ-ից 10.0 Մբ/վ, բ.ա. բաժանորդ, հատ	112 665	143 033	187 091
> 10.0 Մբ/վ, բ.ա. բաժանորդ, հատ	26 349	45 828	95 887
Ընդամենը, հատ	**234 420**	**272 885**	**286 319**
Տեսակարար ՖԼԿԲ / 100 հոգի ըստ բ.ա. տիրույթների			
256 կբ/վ-ից 2.0 Մբ/վ, բ.ա. բաժանորդ/100 հոգի	3.15	2.78	0.11
2.0 Մբ/վ-ից 10.0 Մբ/վ, բ.ա. բաժանորդ/100 հոգի	3.73	4.73	6.19
> 10.0 Մբ/վ, բ.ա. բաժանորդ/100 հոգի	0.87	1.52	3.17
Ընդամենը, ՖԼԿ բաժանորդ/100 հոգի	**7.75**	**9.03**	**9.48**
ՖԼԿԲ, % ըստ բ.ա. տիրույթների			
256 կբ/վ-ից 2.0 Մբ/վ բ.ա., %	40.7%	30.8%	1.2%
2.0 Մբ/վ-ից 10.0 Մբ/վ բ.ա., %	48.1%	52.4%	65.3%
> 10.0 Մբ/վ բ.ա., %	11.2%	16.8%	33.5%
Ընդամենը, %	**100%**	**100%**	**100%**

Ինչպես հետևում է *Աղյուսակ 4*-ից, 2013-15թթ. ընթացքում Հայաստանում զգալի աճել է ՖԼԿ բաժանորդների[19] թիվը ՖԼԿ առավել արագագործ՝ 10 ՄԲ/վ և ավելի բ.ա. տիրույթում: 2013-ին դրանք կազմել էին մոտ 26.3 հազ., իսկ 2015-ին՝ արդեն 95.9 հազ. (աճ 3.6 անգամ): Աճել է նաև ՖԼԿ այս տիրույթի մասնաբաժինը. 2013-ին այն կազմել էր 11.2%, իսկ 2015-ին՝ 33.5%: Տեսակարար ցուցանիշով այս տիրույթի բաժանորդների թիվը 2013-ի 0.87 բաժանորդ/100 հոգի ցուցանիշից աճել է մինչև 3.17 բաժանորդ/100 հոգու՝ 2015-ին: Հակառակը, ՖԼԿ առավել դանդաղ տիրույթում՝ 256 կբ/վ-ից մինչև 2.0 Մբ/վ բ.ա., բաժանորդների թիվը նվազել է 2013-ի 95.4 հազ.-ից մինչև ընդամենը 3.3 հազ.՝ 2015-ին: Համապատասխանաբար նվազել է և այս տիրույթի մասնաբաժինը՝ 2013-ի մոտ 41%-ից մինչև 1.2%՝ 2015-ին:

[19] Համադրելով *Աղյուսակ 4*-ի առաջին 4 տողերում բերվող ցուցանիշները մեր առաջին հոդվածում քննարկվող ՖԼԿԲ ցուցանիշների հետ ([1], *Աղյուսակ* 1, տող 1), կարելի է եզրակացնել, որ խոսքը ֆիզիկական անձ բաժանորդների մասին է: Հիշեցնենք, որ համաձայն ՀԾԿՀ-ի՝ ՖԼԿԲ բաժանորդների ընդհանուր թիվը Հայաստանում կազմել է 256.1 հազ.՝ 2013-ին, 283.9 հազ.՝ 2014-ին և 297.2 հազ.՝ 2015-ին [3]:

Այսպիսով, անցած 3 տարիների ընթացքում (հոդվածի պատրաստման պահին 2016թ. տվյալները բացակայում էին) Հայաստանում ընթանում էր ՖԼԿ ոլորտի թե՛ քանակական (ՖԼԿԲ թվի աճ), թե՛ որակական (առավել արագ տիրույթի ՖԼԿԲ աճ) զարգացում:

Ընդհանուր պատկերը հասկանալու համար *Գծապատկեր 1*-ում բերում ենք մեր տարածաշրջանի 6 երկրների համար 2015թ. ՖԼԿԲ ցուցանիշներն ըստ բ.ա. երեք տիրույթների [15]: Դասակարգումը՝ ըստ առավելագույն՝ 10 ՄԲ/վ և ավելի բ.ա. տիրույթում բաժանորդների թվի: Համեմատության համար բերում ենք նաև այս առումով աշխարհի առաջատար՝ Հվ.Կորեայի ցուցանիշը: Գծապատկերի պատուհանում բերում ենք Հայաստանի 2013-15թթ. ՖԼԿԲ տեսակարար ցուցանիշները (ՖԼԿԲ/100 հոգի)՝ ըստ բ.ա. երեք տիրույթների:

Գծապատկեր 1

Որոշ երկրների ՖԼԿԲ-ն ըստ բ.ա. երեք տիրույթների, 2015թ.
(աղբյուրը՝[15], սեփական հաշվարկներ)



Դեռ 2013-ից Հվ. Կորեայի ՖԼԿԲ 100%-ը բաժանորդագրված էր 10 Մբ/վ և ավելի բ.ա. ֆիքսված լայնաշերտ կապի, իսկ ՖԼԿԲ տեսակարար ցուցանիշը կազմում էր 40.3 ՖԼԿԲ՝ բնակչության 100 հոգուն: 2015-ին տեսակարար ՖԼԿԲ ցուցանիշով Հվ. Կորեային գեազանցում էին միայն Շվեյցարիան՝ 45, Դանիան՝ 42.5, Նիդեռլանդները՝ 41.5 և Ֆրանսիան՝ 40.5 ՖԼԿԲ/100 հոգի: Սակայն բոլոր այս երկրները զիջում էին Հվ. Կորեային 10 Մբ/վ և ավելի բ.ա. տիրույթում բաժանորդների մասնաբաժնով: Այսպես, 2015-ին Ֆրանսիայում բ.ա. այս տիրույթին էր պատկանում ՖԼԿԲ 95%-ը, Շվեյցարիայում՝ 73.5%-ը և այլն:

2015-ին մեր տարածաշրջանում առաջատարը ՌԴ-ն էր, 10 Մբ/վ և ավելի բ.ա. տիրույթում 12.26 ՖԼԿԲ/100 հոգի ցուցանիշով (65%), որին հաջորդում էր Թուրքիան՝ 8.66 ՖԼԿԲ/100 հոգի (69%) և Վրաստանը՝ 6.38 ՖԼԿԲ/100 հոգի (45%): Հայաստանում 10 Մբ/վ և ավելի բ.ա. ՖԼԿԲ տեսակարար ցուցանիշը 2015թ. կազմում էր 3.17 ՖԼԿԲ/100 հոգի (33.5%) և այն շոշափելի գերազանցում էր Ադրբեջանի ցուցանիշին՝ 1.57 ՖԼԿԲ/100 հոգի (8%): Տեսակարար ՖԼԿԲ ընդհանուր թվով Ադրբեջանի (19.93 ՖԼԿԲ/100 հոգի) գերազանցությունը Հայաստանի (9.48 ՖԼԿԲ/100 հոգի) նկատմամբ առավելապես պայմանավորված էր ամենադանդաղ՝ 256 կբ/վ-ից մինչև 2.0 Մբ/վ բ.ա. տիրութի բաժանորդների թվով: 2015-ին Հայաստանում այս թիվն արդեն նվազել էր մինչև 0.11 ՖԼԿԲ/100 հոգի (1.2%), մինչդեռ Ադրբեջանում բ.ա. այս տիրույթի բաժանորդների խումբը դեռ շարունակում էր մնալ ամենամեծը՝ 10.69 ՖԼԿԲ/100 հոգի (54%): Տարածաշրջանում 2015-ին վերջին տեղում Իրանն էր, 0.12 ՖԼԿԲ/100 հոգի ցուցանիշով (1%): Այստեղ նույնպես ընդհանուր ՖԼԿԲ արժեքում (10.99 ՖԼԿԲ/100 հոգի) ամենամեծը ամենադանդաղ բ.ա. տիրույթների բաժանորդների թիվն էր՝ 9.36 ՖԼԿԲ/100 հոգի (85%):

Այսպիսով.

- Անցած 4 տարիների ընթացքում ՖԼԿ հզորության առումով Հայաստանում արձանագրված է էական առաջխաղացում. 2016-ին 2014-ի համեմատ ՖԼԿ տեղակայված հզորությունը գրեթե քառապատկվել է: Աճել է ՖԼԿ տեղակայված հզորության օգտագործման գործակիցը. 2013-ի 60%-ից այն հասել է 75%-ի՝ 2015-ին:

- 2016-ին ՖԼԿ տեղակայված տեսակարար հզորության (ՏՏՀ) ցուցանիշով Հայաստանը հավասարվել է Եվրոպայի միջին ցուցանիշին՝ շարունակելով էականորեն առաջ անցնել աշխարհի մնացած 5 աշխարհագրական տարածաշրջանների միջին ցուցանիշներից: Նույն տարում Հայաստանն առաջ է անցել զարգացած երկրների ՖԼԿ ՏՏՀ միջին ցուցանիշից (140 կբ/վ/ի.օ.)՝ գերազանցելով այն 27%-ով (178 կբ/վ/ի.օ.):
- 2013-15թթ. ժամանակահատվածում մոտ 3 անգամ աճել է ՖԼԿ 10Մբ/վ բ.ա. արագությամբ տիրույթում ՖԼԿԲ թիվը՝ 2015-ին հասնելով 3.17 ՖԼԿԲ/100 հոգի ցուցանիշի, ինչը կազմում էր 2015թ. ՖԼԿԲ ընդհանուր բաժանորդների 33.5%-ը: Այս ցուցանիշով Հայաստանը գերազանցում էր Ադրբեջանին (1.57 ՖԼԿԲ/100 հոգի, 8%) մոտ 2 անգամ, սակայն զիջում Վրաստանին (6.38 ՖԼԿԲ/100 հոգի, 45%)՝ նույնպես մոտ 2 անգամ:

Շարունակելի

Աղբյուրներ և գրականություն

1. *Մարջանյան, Ա.Հ.,* Ֆիքսված լայնաշերտ կապը Հայաստանում և տարածաշրջանում. Փաստեր, «Նորավանք» ԳԿՀ «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 7 (86), 2017:
2. International Telecommunication Union. Measuring the Information Society, http://www.itu.int . International Telecommunication Union. ICT Facts and Figures Annual Reports, https://www.itu.int/en/ITU-D/Statistics/Documents/facts/. International Telecommunication Union. The State of Broadband, www.broadbandcommission.org. The World Bank Group. World Development Indicators. Table 5.12 The information society, http://wdi.worldbank.org/table.
3. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի օգոստոսի 30-ի թիվ 667-Ն հրաման, «Հավելված N 1», http://mtcit.am/edfiles/files/THT/3008201615.2.pdf :
4. ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016թ. գործունեության հաշվետվություն: Հաստատված է 2017թ. արիլի 19-ի No 138L որոշմամբ, http://psrc.am/images/docs/reports/Report_2016.pdf:
5. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի օգոստոսի 30-ի թիվ 667-Ն հրաման, «Հավելված N 2»:
6. *Մարջանյան, Ա.Հ.,* Բառերի Տիեզերք I. Հաճախակիության բառարանները և Google N-grams գործիքը, «21-րդ ԴԱՐ», No 4 (74), 2017:
7. International Telecommunication Union. ICT Facts and Figures 2016. Geneva, June 2016.
8. International Telecommunication Union. ICT Facts and Figures 2017. Geneva, Julay, 2017.
9. Ministry of Communications and Information Technologies. Annual Report - 2013. Baku, Azerbaijan, 2013.
10. Ministry of Communications and High Technologies. Annual Report - 2014. Baku, Azerbaijan, 2014.
11. *Ruddy, Michael, Ozdemir, Esra*, An In-Depth Study on the Broadband Infrastructure in North and Central Asia. Terabit Consulting. UN ESCAP. January, 2014.
12. Republic of Azerbaijan. A Sector Assessment: Accelerating Growth of High-Speed Internet Services in Azerbaijan. WB GTIDR, Report No: AUS9195, Dec. 18, 2014.; Azerbaijan's broadband at a crossroads. 01/28/2015,http://blogs.worldbank.org/ic4d/azerbaijans-broadbandcrossroads .
13. *Orujova, Nigar,* Azerbaijan starts broadband internet project. *AzerNews*, 4 June 2015, https://www.azernews.az/business/83030.html; *Аббасов, Али,* Базовый элемент модернизации. *Российская газета*, №6044 (68), 29.03.2013; Азербайджан активно поддерживает мировые тенденции по развитию широкополосного интернета, инноваций и технопарков. *Business Time*, №12, Декабрь, 2013.
14. Global Open Data Index, http://2015.index.okfn.org/.
15. International Telecommunication Union. Measuring the Information Society Report - 2016. Geneva, 2016.

ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐ ՀԱՅ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Կարեն Վերանյան[*]

Վերադասավորումներ Իսրայելի մերձավորարևելյան դիվանագիտությունում

Վերջին մի քանի տարիներին Իսրայելն զգալիորեն ակտիվացրել է իր քաղաքականությունը հարավկովկասյան ուղղությամբ: Կարելի է ասել, որ Հարավային Կովկասն աստիճանաբար էլ ավելի մեծ կարևորություն է սկսում ներկայացնել Իսրայելի՝ Մեծ Մերձավոր Արևելքի տարածաշրջանային քաղաքականությունում: Հարավկովկասյան ուղղությամբ իսրայելական կողմի ներգրավվածությունը պայմանավորված է մերձավորարևելյան ռազմաքաղաքական նոր վերադասավորումներով, որտեղ առանցքային նշանակություն ունեն իրաքյան Քուրդիստանի անկախացման գործընթացը, տարածաշրջանում Իրանի դերակատարության մեծացումը, թուրք-իսրայելյան հարաբերություններում նկատվող նոր միտումները, նախկին գործող և նոր էներգետիկ հանգույցները և այլն:

Վերջին շրջանում մերձավորարևելյան տարածաշրջանում և մասնավորաբար սիրիական զարգացումներում իրանական գործոնի ազդեցության ընդլայնման միտումները լրջորեն մտահոգում են իսրայելական կողմին, և Իրանի անմիջական հարևանությամբ գտնվող հարավկովկասյան տարածաշրջանում Իսրայելի ակտիվացումը Թել Ավիվում դիտում են նաև որպես հնարավորություն՝ հավասարակշռելու իրանական ազդեցությունը: Ավելին, Թուրքիայում իրականացված վերջին հեղաշրջման փորձից հետո էապես վատթարացել են Թուրքիա-Արևմուտք հարաբերությունները, ինչը նպաստել է Թուրքիայի գործակցության խորացմանը տարածաշրջանային այնպիսի երկրների հետ, ինչպիսիք են Իրանը, Ռուսաստանը: Թուրքիայի և Իրանի շահերը համընկնում են նաև քրդական հարցում, և վերջիններս

[*] «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար:

ակտիվ համատեղ գործունեություն են իրականացնում մասնավորապես իրաքյան Քուրդիստանի անկախացման գործընթացի ձախողման ուղղությամբ: Այս իրողությունը տրամաբանորեն ուժեղացնում է Իրանի դիրքերը տարածաշրջանում, ինչը մտահոգում է առաջին հերթին իսրայելական կողմին: Հավելենք նաև, որ Մերձավոր Արևելքում քրդական շարժումներին զգալի աջակցություն է ցուցաբերում Իսրայելը, որոնց միջև համագործակցությունը ձևավորվել է դեռևս նախորդ դարի 60-ականներից սկսած: Իսրայելը զգալի դերակատարում ունի այդ թվում և իրաքյան Քուրդիստանի անկախացման գործընթացում:

Մյուս կողմից, վերջերս անհարթ են ընթանում թուրք-իսրայելական հարաբերությունները: Խոսքը Թուրքիայի նկատմամբ Իսրայելի արտաքին քաղաքականությունում նկատվող որոշակի վերադասավորումների մասին է: Սա հիմք հանդիսացավ, որպեսզի տարբեր փորձագիտական գնահատականներ հնչեն Իսրայելի՝ այսպես կոչված հակաթուրքական դաշինք ձևավորելու մտադրության մասին: Հարցի առնչությամբ նշենք, որ վերջին մի քանի տարիների կտրվածքով Իսրայելը մի կողմից ակտիվ աշխատանքներ է տանում Թուրքիայի դաշնակից երկրների՝ թուրքական ազդեցության դաշտից դուրսբերման ուղղությամբ, ինչպես դա վկայում են Իսրայելի համագործակցության զարգացման միտումները Ադրբեջանի, Ղազախստանի հետ, մյուս կողմից՝ Թել Ավիվը ձգտում է երկխոսություն հաստատել այնպիսի պետությունների հետ, որոնք ավանդաբար հանդիսանում են պաշտոնական Անկարայի բնական հակառակորդները: Տասը տարի առաջ անհավատալի կինչեր այն միտքը, որ Իսրայելը գործընկերային կամ դաշնակցային հարաբերություններ է հաստատել Կիպրոսի և Հունաստանի հետ, բայց այսօր Իսրայել-Կիպրոս-Հունաստան եռակողմ համագործակցությունն այլևս իրականություն է: Վերջին 2-3 տարիներին ձևավորված Իսրայել-Կիպրոս-Հունաստան եռակողմ համագործակցային ձևաչափը տարբեր լրատվամիջոցներ չհապաղեցին կոչել եռակողմ հակաթուրքական դաշինք:

Իսրայելի, Հունաստանի և Կիպրոսի միջխորհրդարանական համագործակցության արդյունքում դեռևս 2016թ. առաջին կեսին Նիկոսիայում

երեք երկրների արտաքին հարաբերությունների և պաշտպանության հարցերով խորհրդարանական հանձնաժողովների միջև ստորագրվեց ռազմավարական երկխոսության զարգացման համատեղ հռչակագիր: Այն ստորագրվեց երեք երկրների կառավարությունների միջև համագործակցության խորացման մասին մինչ այդ ձեռք բերված պայմանավորվածությունների հիման վրա: Փաստաթուղթը հնարավորություն կտա կողմերին համագործակցել այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են կիբեռանվտանգությունը, գործարարությունը, տեխնոլոգիական նորարարությունները: Կողմերը պայմանավորվել են նաև համագործակցություն հաստատել երեք ժողովուրդների սփյուռքի համայնքների միջև: Որոշ տվյալների համաձայն, նշյալ երկրները երկխոսություն են սկսել արդեն այդ թվում և պաշտպանական ոլորտում գործակցության հաստատման հարցերի շուրջ:

Երեք երկրների ղեկավարները նախատեսում են զարգացնել համագործակցությունը նաև տնտեսական-էներգետիկ բնագավառում: Մասնավորապես, պայմանավորվածություն է ձեռք բերվել դեպի Եվրոպա գազատարի կառուցման տնտեսական նպատակահարմարությունն ուսումնասիրող եռակողմ հանձնաժողովի ձևավորման վերաբերյալ: Առաջին փուլում նախատեսվում է կառուցել գազատարի՝ Իսրայելից դեպի Կիպրոս հատվածը, այնուհետև՝ դեպի Հունաստան, որտեղից հնարավորություն կլինի գազն արտահանել Եվրոպա: Հիշեցնենք, որ դեռևս 2009-2010թթ. Միջերկրական ծովի իսրայելական շելֆի առանձին հատվածներում հայտնաբերվեցին բնական գազի խոշոր պաշարներ: Դա մեծ ազդեցություն ունեցավ դեպի Իսրայել բնական գազի արտահանումների նախկին նախագծերի և ձեռք բերված պայմանավորվածությունների առումով: Միջերկրական ծովում, Հայֆա քաղաքից ոչ հեռու, բնական գազի խոշոր հանքավայրերի հայտնաբերումը մեծ վնաս հասցրեց առաջին հերթին Ռուսաստանից և Ադրբեջանից դեպի Իսրայել բնական գազի մատակարարումներին: Արդյունքում՝ Իսրայելը ոչ միայն զգալի չափով լուծեց իր էներգետիկ անվտանգության հիմնահարցերը, այլև փորձեց նոր հայտնաբերված հանքավայրերի բնական գազն այլ երկրներ արտահանելու նոր

ուղիներ գտնել: Մասնավորապես, շատ է խոսվում իսրայելական Լևիաֆան և Թամար հանքավայրերում հայտնաբերված բնական գազի զգալի պաշարների մասին: Լևիաֆանը գտնվում է Միջերկրական ծովի իսրայելական շելֆում, Լիբանանի հետ Իսրայելի ծովային սահմանի մոտ՝ Հայֆա քաղաքից 135 կմ արևմուտք: Վերջինս, նախնական տվյալներով, ունի 453 մլրդ մ^3 գազի ապացուցված պաշարներ: Լևանտի ավազանի բնական գազի ընդհանուր ապացուցված և հնարավոր պաշարներն Իսրայելի և Կիպրոսի սահմաններում կազմում են 1.18 տրլն մ^3, որից 127 մլրդ մ^3՝ Կիպրոսի շելֆում և ավելի քան 1 տրլն մ^3՝ Իսրայելի հատվածում: Իսրայելի բնական գազի պաշարների շուրջ 88%-ը կենտրոնացած է վերը հիշատակված 2 հանքավայրերում: Ելնելով այս իրողություններից՝ փորձագետների մի հատված հակված էր հաստատելու այն տեսակետը, ըստ որի՝ Իսրայել-Կիպրոս-Հունաստան եռակողմ դաշինքը գլխավորապես հետապնդում է զուտ էներգետիկ շահեր: Սակայն այդ դեպքում տրամաբանորեն հարց է առաջանում՝ որքանո՞վ է հիմնավորված կամ նպատակային դաշինքի գործակցության ամրագրումն այլ ոլորտներում ևս:

Ինչևէ, Իսրայել-Կիպրոս-Հունաստան եռակողմ՝ այսպես կոչված հակաթուրքական դաշինքի ձևավորումը լավ հնարավորություն է ստեղծում նաև այս ուղղությամբ Հայաստանի դիվանագիտության ակտիվացման համար: Նախ՝ Հայաստանն ավանդաբար բարիդրացիական հարաբերություններ է պահպանում թե՛ Կիպրոսի, թե՛ Հունաստանի հետ, ուստի այս ձևաչափում Հայաստանը կարող է երկխոսության կամուրջ հանդիսանալ Իսրայելի, մյուս կողմից՝ Հունաստանի և Կիպրոսի գործակցության զարգացման հարցում: Ավելին, հայկական սփյուռքն ավանդաբար ջերմ հարաբերություններ և համագործակցության բարձր մակարդակ ունենալով հունական և կիպրական սփյուռքի հետ՝ կարող է դրական ավանդ ունենալ հրեական, հունական ու կիպրական սփյուռքի տարբեր համայնքների միջև երկխոսության հաստատման և խորացման գործում: Սա լավ հնարավորություն է հայկական կողմի համար Իսրայելի հետ երկկողմ քաղաքական-տնտեսական հարաբերությունները զարգացնելու առումով ևս:

Ակտիվացում հայ-իսրայելական երկկողմ հարաբերություններում

Վերջին տարիներին նկատվում է որոշակի ակտիվացում հայ-իսրայելական քաղաքական փոխհարաբերություններում: Երկու երկրների միջև հարաբերությունների զարգացմանը խթանեցին երկկողմ խորհրդարանականների միջև երկխոսության հաստատմանը և զարգացմանն ուղղված նախաձեռնությունները: 2015թ. դեկտեմբերի կեսերին Իսրայելի Քնեսեթի հրավերով ՀՀ ԱԺ պատվիրակությունն այցելեց Իսրայել՝ ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախկին ղեկավար *Արտակ Զաքարյանի* գլխավորությամբ: Իսրայելում պատվիրակները հանդիպեցին Քնեսեթի փոխխոսնակ *Թալի Պլոսկովի*, Ասիայի և Մերձավոր Արևելքի հարցերով դեպարտամենտի ղեկավար *Արիել Շաֆրանսկու*, Քնեսեթի Միջազգային հարաբերությունների և անվտանգության հարցերով մշտական հանձնախմբի ղեկավարության հետ: 2016թ. ապրիլին իսրայելական կողմը պատասխան այցելություն կատարեց. իսրայելական խորհրդարանական պատվիրակությունը, նույն՝ Թալի Պլոսկովի ղեկավարությամբ, առաջին անգամ այցելեց Հայաստան: Ապրիլի 3-ին արտգործնախարար Էդ. Նալբանդյանն ընդունեց Իսրայելի Քնեսեթի փոխխոսնակ, Հայաստան-Իսրայել խորհրդարանական բարեկամության խմբի ղեկավար Թալի Պլոսկովի գլխավորած պատվիրակությանը: Զրուցակիցները քննարկեցին հայ-իսրայելական երկկողմ հարաբերությունների օրակարգային հարցեր:

2017թ. հունվարի 17-ին սկսվեց ՀՀ խորհրդարանական ընդլայնված պատվիրակության այցն Իսրայել՝ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախկին նախագահ, Հայաստան-Իսրայել բարեկամական խմբի նախկին ղեկավար Ա.Զաքարյանի գլխավորությամբ: Հայկական պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ գործարար շրջանակների, ՏՏ ոլորտի իսրայելական ընկերությունների հետ՝ համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունների քննարկման նպատակներով: Հանդիպումներ եղան Թել Ավիվի «Ասուտ» առողջապահական համալիրի, բժշկական կրթության պատասխանատուների հետ, որի արդյունքում ձեռք բերվեցին մի շարք պայմանավորվածություններ:

Նշենք նաև, որ բարեկամության խորհրդարանական խմբերը վերջին հանդիպումներում համաձայնել էին ստեղծել հայ-իսրայելական հասարակական ֆորում:

Ս.թ. հուլիսին Հայաստան էր այցելել արդեն ձևավորված «Հայաստան–Իսրայել» հասարակական ֆորումի համանախագահ, Քնեսեթի նախկին պատգամավոր Ալեքսանդր Ցինկերը: Նա կարևոր դերակատարում է ունեցել վերջին շրջանում հայ-իսրայելական հարաբերությունների զարգացման գործում:

Ս.թ. հուլիսի վերջին պաշտոնական այցով Հայաստան եկավ Իսրայելի տարածաշրջանային համագործակցության նախարար Ցախի Հանեգբին: Հուլիսի 25-ին վերջինիս հետ հանդիպում ունեցավ Հայաստանի արտաքին գործերի նախարարը: Նախարարները ստորագրեցին «ՀՀ կառավարության և Իսրայել պետության կառավարության միջև դիվանագիտական անձնագրեր ունեցող անձանց մուտքի արտոնագիր ստանալու պահանջի վերացման մասին» համաձայնագիրը և «ՀՀ-ի և Իսրայել պետության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» կոնվենցիան: Իսկ Հայաստանի մշակույթի նախարար Արմեն Ամիրյանի հետ հանդիպման ընթացքում կողմերը ստորագրեցին «ՀՀ-ի և Իսրայելի միջև մշակույթի, կրթության և գիտության, սպորտի և երիտասարդության ոլորտներում 2017-2020թթ. համագործակցության մասին» ծրագիրը: Իսրայելի տարածաշրջանային համագործակցության նախարար Ցախի Հանեգբիին ընդունեց նաև ՀՀ վարչապետ Կ.Կարապետյանը: Քննարկվել են տնտեսական, տեղեկատվական տեխնոլոգիաների, զբոսաշրջության, առևտրի, գյուղատնտեսության բնագավառներում համագործակցության հնարավորություններին վերաբերող հարցեր: Զրուցակիցները մտքեր են փոխանակել Հայաստանի և Իսրայելի միջև տնտեսական հարաբերությունների և գործարար կապերի աշխուժացման հեռանկարների շուրջ:

Ի դեպ, հայ-իսրայելական երկկողմ կապերի ակտիվացման նպատակով ս.թ. մայիսի 19-ին բացվեց Երևան-Թել Ավիվ չվերթը: Երևան-Թել-Ավիվ-Երևան երթուղով չվերթները կիրականացվեն շաբաթական երկու անգամ՝ հինգշաբթի և կիրակի օրերին:

Առաջին անհամաձայնություններն Ադրբեջան-Իսրայել համագործակցությունում

Վերջին ամիսներին Ադրբեջան-Իսրայել բարձր մակարդակի գործակցությունում նկատելի են որոշակի անհամաձայնություններ: Սա հիմք հանդիսացավ հայ և օտարերկրյա փորձագիտական որոշ շրջանակների համար՝ արձանագրելու, որ չնայած Իսրայելի և Ադրբեջանի միջև շարունակվում են դաշնակցային համագործակցության տեմպերը, այնուհանդերձ, Իսրայելը նոր ճշգրտումներ է մտցնում իր հարավկովկասյան արտաքին քաղաքականությունում: Ադրբեջանի և Իսրայելի միջև անհամաձայնությունների առաջին նշանները դրսևորվեցին ս.թ. կեսերին՝ Արցախ իսրայելցի հայտնի քաղաքագետ Ավիգդոր Էսքինի այցելության հետ կապված: Էսքինը, որի փորձագիտական հայացքները բավական ընդունելի են Իսրայել պետության ղեկավարության շրջանում, արցախյան հակամարտության հարցում հայտնի է իր ադրբեջանամետ հայտարարություններով: Այս տեսանկյունից հայկական հասարակական-փորձագիտական որոշ շրջանակների ակտիվ նախաձեռնությամբ Էսքինի՝ Ստեփանակերտ կատարած այցելությունն իսկապես նախադեպ պետք է համարել, ինչի հետևանքով իսրայելցի քաղաքագետն անմիջապես հայտնվեց Ադրբեջանի այսպես կոչված «սև ցուցակում»: Արցախում Էսքինը հյուրընկալվեց ամենաբարձր մակարդակով. վերջինիս հետ հանդիպում ունեցավ նաև Արցախի նախագահ Բակո Սահակյանը: Աննախադեպ էր նաև Էսքինի հայտարարությունը, թե՝ «Արցախը դե-ֆակտո և իր կարգավիճակով ստեղծել է անկախ պետականություն՝ շեշտելով Արցախի միջազգայնացման հարցի անհրաժեշտությունը ոչ միայն հակամարտության համատեքստում, այլև որպես հայ ժողովրդի բնօրրան»:

Իսրայելի և Ադրբեջանի համագործակցությունում հաջորդ անհամաձայնությունը մեծ աղմուկ բարձրացրեց լրատվական դաշտում: Իսրայելական հեղինակավոր թերթերից մեկը հրապարակեց տեղեկատվություն Ալիևի ընտանիքի ֆինանսական գործունեության և ընտանեկան այլ տվյալների մասին: Ադրբեջանի նախագահի որդու հիվանդության և Իսրայելում նրա բուժման, Մեհրիբան Ալիևայի և որդու կողմից Իսրայելում իրականացված շուրջ $600 մլն ներդրումների, նրանց կողմից իսրա-

յելական Հայֆա քաղաքում $6 մլն արժողությամբ առանձնատան ձեռքբերման վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը չէր կարող իրականացվել Իսրայելի ղեկավարության հսկողությունից դուրս, ուստի տեղեկատվության լուսաբանումը թերևս կարելի է համարել իսրայելական կողմից տեղեկատվության միտումնավոր արտահոսք: Այդ եզրահանգման համար հիմք է ծառայում այն հանգամանքը, որ արտերկրում Ալիևների ընտանիքի ֆինանսական հսկայածավալ կարողությունների կուտակման վերաբերյալ տեղեկատվության արտահոսքերը մեկ անգամ չէ, որ մեծ աղմուկ են բարձրացրել, ինչն ադրբեջանական հասարակությունում դժգոհությունների առիթ է տվել: Ուստի Իսրայելում Մեհրիբան Ալիևայի իրականացրած ներդրումների, առավել ևս՝ Ալիև-կրտսերի հիվանդության և բուժման մասին տեղեկատվությունը պետք է գաղտնի պահվեր: Սակայն իրականությունն այն է, որ իսրայելական կողմը միակողմանիորեն բացում է փակագծերը, մնում է պարզել՝ ինչո՞ւ: Սցենարներից մեկի համաձայն, սա կարող է մասամբ պայմանավորված լինել վերջին շրջանում հայ-իսրայելական հարաբերությունների զարգացման միտումներով, ինչի առնչությամբ Ալիևը կարող էր իսրայելական կողմին նախապես արտահայտած լինել իր դժգոհությունը: Պատահական չէր, որ Ալիևների ընտանիքի հետ կապված վերոնշյալ տեղեկատվությունը զուգադիպեց Իսրայելի տարածքային համագործակցության նախարարի Հայաստան կատարած պետական պաշտոնական այցելությանը: Եթե հետևենք այս վարկածի տրամաբանությանը, ապա կարող ենք արձանագրել Ադրբեջան-Իսրայել համագործակցությունում դրսևորված առաջին բացահայտ հակասությունները: Խոշոր հաշվով, Իսրայել-Ադրբեջան տարակարծությունները հարկ է դիտարկել հարավկովկասյան և մերձտարածաշրջանային գործընթացների նկատմամբ Իսրայելի արտաքին քաղաքականության նոր վերադասավորումների հարթությունում:

Իսրայելում Ալիևների ֆինանսական ներդրումների, Ալիևի որդու բուժման մասին տեղեկատվության բացահայտմանը հաջորդեց հերթական միջադեպը, երբ իսրայելական հեղինակավոր *Aeronautics Defense Systems* ռազմարդյունաբերական կազմակերպության օպերատորները մերժեցին ադրբեջանական կողմի պահանջը՝ Ադրբեջանին տրամադր-

ված իսրայելական ԱԹՍ-ները փորձարկել հայկական դիրքերի ուղղությամբ: Սա նշանակում է, որ կազմակերպության օպերատորներն Իսրայելի պաշտպանության նախարարությունից հանձնարարական են ունեցել ԱԹՍ-ները փորձարկել միմիայն ոչ մարտական պայմաններում: Ընդորում, նշենք, որ այս միջադեպը երկկողմ հարաբերություններում ռազմաքաղաքական նշանակության առաջին հակասությունն էր կամ տհաճ միջադեպը: Այս ամենի հետևանքով Իսրայելի ՊՆ-ն հետաքննություն սկսեց, ինչի արդյունքում ժամանակավորապես դադարեցվեց Ադրբեջանին *Orbitier* տեսակի ԱԹՍ-ների վաճառքը: Ելնելով հայ-իսրայելական քաղաքական հարաբերությունների ակտիվացման և ադրբեջանա-իսրայելյան որոշակի անհամաձայնությունների տրամաբանությունից՝ հնարավորություն է բացվում Հայաստանի դիվանագիտությունում Իսրայելի հետ քաղաքական համագործակցությունում գոյացած վակուումն արդյունավետ լրացնելու համար:

Ամփոփում

Հայաստանյան հասարակական-փորձագիտական որոշ շրջանակներում այն մտավախությունը կա, որ Իսրայելի հետ Հայաստանի քաղաքական հարաբերությունների զարգացման հարցը մտահոգում է իրանական կողմին և այդ պատճառով կարող է բացասական հետևանքներ ունենալ հայ-իրանական քաղաքական-տնտեսական համագործակցության ներկա մակարդակի վրա: Պաշտոնական Թեհրանը բացասաբար է մոտենում Մերձավոր Արևելքում կամ, մասնավորաբար, Հարավային Կովկասում իսրայելական գործոնի ակտիվացման ցանկացած դրսևորմանը: Նշենք, սակայն, որ նույն Ադրբեջանը շարունակում է զարգացնել ռազմավարական գործակցությունն Իսրայելի հետ և չնայած իրանական կողմի դժգոհությանը՝ միաժամանակ կարողանում է խորացնել բազմակողմանի համագործակցությունն Իրանի հետ: Այսպիսով, Իրան-Իսրայել հակամարտությունը, ըստ էության, լուրջ բացասական ազդեցություն մինչ օրս չի թողել իրանա-ադրբեջանական համագործակցության վրա: Վերադառնալով հայ-իսրայելական հարաբերություններին՝ նշենք, որ հաշվի առնե-

լով Ադրբեջան-Իսրայել ռազմաքաղաքական գործակցության բավական բարձր մակարդակը, ինչպես նաև հարավկովկասյան տարածաշրջանում իսրայելական կողմի ակտիվացման միտումները՝ ըստ էության, պետք է առանձնակի կարևորել Հայաստան-Իսրայել քաղաքական երկխոսությունը: Ի տարբերություն Ադրբեջանի, որն իսրայելական կողմի հետ գործակցությունը դիտարկում է նախևառաջ իսրայելական արտադրության սպառազինությունների և ռազմական տեխնիկայի մատակարարումների համատեքստում՝ այդպիսով խախտելով տարածաշրջանում ռազմական հավասարակշռությունը, հայկական կողմն Իսրայելի հետ գործակցությունը դիտարկում է գլխավորապես որպես տարածաշրջանում կայունության և ուժերի միջև հարաբերակցության պահպանման հնարավորություն:

«ՆՈՐ ԹՈՒՐՔԻԱ».
ՊԱՏՄԱԿԱՆ ՋՐԲԱԺԱՆՆԵՐ

Հայկ Գաբրիելյան[*]

2017թ. օգոստոսի վերջին Թուրքիայում նշեցին Մանազկերտի ճակատամարտի (1071թ.) 946-ամյակն ու Դումլուփընարի ճակատամարտի (1922թ.) 95-ամյակը։ Օգոստոսի 26-ին Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը, մասնակցելով Մանազկերտի ճակատամարտի 946-ամյակին նվիրված հանդիսավոր արարողությանը, հայտարարեց. «Դարեր առաջ թյուրք սուլթաններ Ալփարսլանի և Քըլըչարսլանի ցուցաբերած խիզախությունը վերստին դրսևորվեց 2016թ. հուլիսի 15-ի ռազմական հեղաշրջման փորձի (ՌՀՓ) կանխման ժամանակ։ 946 տարի առաջ սուլթան Ալփարսլանը զորքերն առաջ մղեց բյուզանդացիների դեմ՝ չվախենալով մահվանից։ Արդյունքում՝ նրա վճռականությունը փոխանցվեց նրանց, ովքեր կանգնած են թուրք ժողովրդի գլխին։ Զգուշացնում ենք նրանց, ովքեր ցանկանում են թուրք ժողովրդին դարձնել իրենց վասալը։ Թուրքիան ամուր կանգնած է ոտքերի վրա։ Որևէ մեկն ի զորու չէ խանգարել Թուրքիայի հետագա զարգացմանը։ Նրանք, ովքեր հաշվի չեն առնում պատմության դասերը, դատապարտված են դրանք վերստին վերապրելու։ Դժբախտաբար, Մանազկերտի հաղթանակի կարևոր նշանակությունը երկար ժամանակ անտեսվել է Թուրքիայում։ Միգուցե բարի նկատառումներից ելնելով՝ փորձեր են արվել Անատոլիայում թուրքերի ներկայությունը շաղկապելու 1071թ. Մանազկերտի հաղթանակին նախորդած դեպքերի հետ, որոնք սակայն օգտակար չեն եղել։ Մանազկերտի հաղթանակից 4 տարի հետո՝ 1075թ., այս տարածաշրջանում մեր առաջին պետությունը ստեղծեցինք Իզնիկում (Նիկիա), հիմնեցինք Անատոլիայի Սելջուկյան պետությունը (Իկոնիայի սուլթանություն)։ Սուլթան Ալփարսլանը 1071թ. մեր առջև բացեց Անատոլիայի դռները։ Իրականում այդ հաղթանակը մեզ պարգևեց նոր հայրենիք ու

[*] Թուրքագետ, ՄԱՀՀԻ ասոցացված փորձագետ։

ապագա: Դրանից երկու դար անց ստեղծեցինք աշխարհի խոշորագույն գերտերություններից մեկը՝ Օսմանյան կայսրությունը, որի տարածքները ձգվում էին Գալիցիայից դեպի Եմեն, Տրիպոլիից դեպի Կովկաս: Հնարավոր է՝ երկրի ղեկավարության մի շարք անձինք անտեսել են Մանազկերտի դասերը, սակայն ոչ ժողովուրդը: 2016թ. հուլիսի 15-ին Թուրքիայի իշխանություններին դիմակայել են այնպիսի վտանգավոր թշնամիներ, ինչպես որ դարեր առաջ մեր նախնիներ Օսմանգազիին, Մեհմեթ Ֆաթիհ սուլթանին, Աբդուլհամիդին: Մեզ դիմակայում էր նույնպիսի նենգ թշնամի, որպիսին Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի դեպքում էր: Այսօր մենք ունենք միասնական հայրենիք՝ 780.000 կմ² տարածքով: Հուսով ենք, որ այսուհետ շարունակ կտոնենք Մանազկերտի փառապանծ հաղթանակը՝ գիտակցելով դրա կարևորությունը: Մեր հորիզոնում են 2023, 2053 և 2071 թվականները: Մենք մտադրվել ենք 2071թ. հետ կապված մեր նախագծերի միջոցով Անատոլիան մեր սրտից ու շնչող թոքից վերածել մեր ուղեղային կենտրոնի»[1]:

Էրդողանի վերոնշյալ խոսքերին անդրադառնալուց առաջ նախ նշենք, որ սա առաջին դեպքն էր, որ Թուրքիայի Հանրապետությունում (ԹՀ) պետական մակարդակով տոնեցին Մանազկերտի հաղթանակը: Ուշագրավ է, որ Մանազկերտում այդ կապակցությամբ հիմնել էին 1071 վրան և կազմակերպել ձիարշավներ ու նետաձգություն[2]: Հիշեցնենք, որ ընթացիկ տասնամյակի սկզբից Էրդողանը, թերևս, ամեն տարի հիշատակում և կարևորում է 2023, 2053 և 2071 թվականները: Օրինակ, 2013թ. մայիսի սկզբին Էրդողանը հայտարարեց. «Մենք (մեր սերունդը) կհասնենք 2023 թվականի հետ կապված նպատակներին, մեր զավակները՝ 2053թ., իսկ մեր թոռները՝ 2071թ. հետ կապված նպատակներին[3]:

2023թ. լրանալու է ԹՀ հիմնադրման 100-ամյակը, 2053թ.՝ օսմանների (Մեհմեթ Ֆաթիհ) կողմից Կոստանդնուպոլսի գրավման 600-ամյակը, իսկ 2071թ.՝ Մանազկերտի ճակատամարտի 1000-ամյակը: Այդ տարե-

[1] Cumhurbaşkanı Erdoğan Malazgirt'te, Milliyet, 26.08.2017.
[2] Malazgirt Zaferi'ne ilk kez devlet töreni; Cumhurbaşkanı Erdoğan kıldan örülme han çadırında ağırlanacak, T24, 25.08.2017.
[3] Erdoğan'ın 2071'den önce yeni hedefi!, Yeni Şafak, 07.05.2013.

թվերը շարունակ կարևորելով, դրանց մասին հիշատակելով՝ Էրդողանը ներկա և ապագա սերունդներին, իր «նոր Թուրքիային» պատրաստում է այդ իրադարձություններին՝ փառաբանելով պատմական անցյալը։ Ընդ որում՝ նկատելի է, որ Էրդողանը պատահաբար չի ընտրել հենց այդ տարեթվերը, որ նա դրանց միջոցով հստակ պատմական ջրբաժաններ է անցկացնում. սելջուկյան (2071թ.), օսմանյան (2053թ.) և հանրապետական (2023թ.)։ Թերևս, հենց պատմական այս ջրբաժանների հանգամանքով է պայմանավորված այն, որ Էրդողանի կողմից շարունակ հիշատակվող տարեթվերում տեղ չի գտել 2099թ.՝ օսմանյան բեյության (պետության) ստեղծման 800-ամյակը (1299թ.)։ Փոխարենն Էրդողանը օսմանյան ժամանակաշրջանի կարևոր տարեթվերից կամ հաղթանակներից նախընտրել է 1453թ., երբ օսմանյան պետությունը Կոստանդնուպոլսի գրավումից հետո դարձավ կայսրություն։ Դժվար է պատկերացնել, որ Էրդողանը 2099թ. մասին չի հիշատակում այն պատճառով, որ դեռ բավական երկար ժամանակ կա մինչ այն (2071թ. նույնպես պատկառելի ժամանակ կա)։ Օրինակ, Էրդողանը կարող էր հայտարարել, որ իրենց ծոռներն էլ կհասնեն 2099թ. հետ կապված նպատակներին։

Ինչ վերաբերում է Մանազկերտի ճակատամարտում տարած հաղթանակի 946-ամյակին նվիրված Էրդողանի ելույթին, ապա այն ինքնին ուշագրավ տարրեր էր պարունակում։ Վերջին ավելի քան մեկ տարում Էրդողանը չի խորշել և խորշում յուրաքանչյուր պատեհ կամ անպատեհ առիթով բարձրաձայնել ՌՀՓ տապալման և դրանում իր դերակատարության մասին։ Կարելի է ենթադրել, որ Թուրքիայում Մանազկերտի հաղթանակն առաջին անգամ պետական մակարդակով տոնելը կապված է եղել նաև ՌՀՓ-ի հետ, քանի որ դա Էրդողանին հնարավորություն կտար հերթական անգամ բարձրաձայնել ՌՀՓ-ի դեմ իր հաղթանակի մասին։ Ավելին, Էրդողանը ՌՀՓ-ի դեմ հաղթանակն այդպիսով դրեց Մանազկերտի ճակատամարտում հաղթանակի հետ նույն հարթության վրա, որով և սելջուկյան սուլթան Ալփարսլանի հետ կանգնեց նույն հարթության վրա։ Ի դեպ, ավելի վաղ Էրդողանը ՌՀՓ-ի դեմ հաղթանակը հավասարեցրել էր 1915թ. Դարդանելի (Չանաքքալեի) ճակատամարտում անգլո-ֆրան-

սիական զորքերի դեմ տարած հաղթանակին, 1922թ. Դումլուփընարի ճակատամարտում հույների դեմ տարած հաղթանակին՝ այդպիսով մեկ հարթության վրա կանգնելով Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի հետ:

Ավելին, երբ 2016թ. հուլիսի 28-ին Թուրքիայի Բարձրագույն ռազմական խորհրդի (*ԽԱՏ*) նիստի անդամներն այցելեցին Անըթքաբիր՝ ԹՀ հիմնադիր Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի դամբարան, Թուրքիայի վարչապետ Բինալի Յըլդըրըմը տեղի գրառումների տետրում ՌՀՓ ձախողումը որակեց որպես «երկրորդ ազատագրական պատերազմում» (քեմալական շարժման) տարած հաղթանակ: Օգոստոսի 7-ին էլ Բ.Յըլդըրըմը Ստամբուլի Յենիքափը հրապարակում «Ժողովրդավարության ու շեհիթների համար» հանրահավաքի ժամանակ հայտարարեց, որ 2016թ. հուլիսի 15-ն օրացույցի մեջ մտավ որպես «Թուրքիայի երկրորդ ազատագրական պատերազմի օր». «Չանաքքալեում, Ազատագրական պատերազմի ժամանակ դաստան գրած այս ժողովուրդը նույն ոգով դաստան գրեց նաև հուլիսի 15-ին: Հուլիսի 15-ը Երկրորդ ազատագրական պատերազմն է»:

Այսպիսով, թուրքական իշխանությունների կողմից ակնհայտ փորձ է արվում ՌՀՓ-ի դեմ տարած հաղթանակը չափից ավելի փառաբանելու, այն ուռճացնելու, Դարդանելի օպերացիայի ու քեմալական շարժման հաղթանակի հետ մեկ շարքում դասելու համար: Դրանով փորձ է արվում առնվազն հավասարության նշան դնել Աթաթուրքի և Էրդողանի միջև՝ որպես «ազատագրական երկու պատերազմների» հաղթողներ[4]:

2017թ. օգոստոսի 30-ին Թուրքիայում նշեցին Դումլուփընարի ճակատամարտում տարած հաղթանակի 95-ամյակը, ինչպես նաև երկրի զինված ուժերի (ԶՈՒ) օրը: Այդ կապակցությամբ Էրդողանն ուղերձ հղեց՝ ընդգծելով, որ ընթացիկ տարում Ղուրբան բայրամի (Զոհաբերության տոն) տոնը համընկել է թուրք ժողովրդի պատմության մեջ երկու նշանակալից իրադարձությունների՝ Մանազկերտի և Դումլուփընարի ճակատամարտերում տարած հաղթանակների հետ. «Թուրք ժողովրդի պատմական հաղթանակների շղթայում հերթական օղակը դարձավ 2016թ.

[4] *Հայկ Գաբրիելյան,* Թուրքիայի ռազմական ոլորտի բարեփոխումների շուրջ, «Նորավանք» ԳԿՀ, 13.10.2016:

հուլիսի 15-ի ՌՀՓ տապալումը: Գլուխ ենք խոնարհում հանուն ազատության և երկրի միասնության մեր ընկածների ու վիրավորների առջև»[5]: Ինչպես տեսնում ենք, Էրդողանն այս դեպքում էլ է հիշատակում ՌՀՓ տապալման մասին՝ այն որակելով որպես պատմական հաղթանակ և ակնարկելով դրանում իր մեծ դերի մասին:

Ի դեպ, Թուրքիայի ԶՈՒ Գլխավոր շտաբի (ԳՇ) պետ, բանակի գեներալ Հուլուսի Աքարի կինը 2017թ. օգոստոսի 30-ի տոնակատարությանը ներկայացել էր գլխաշորով, ինչը չվրիպեց թուրքական մամուլի ուշադրությունից[6]: Դա հանդիսացավ Թուրքիայում զինվորականների իշխանության սահմանափակման ուղղությամբ Էրդողանի գործադրած վիթխարի ջանքերի արդյունավետության հերթական ցուցիչը: Ուշագրավ է, որ 2016թ. օգոստոսի 30-ին Դումլուփընարի ճակատամարտում տարած հաղթանակի 94-ամյակն ու ԶՈՒ տոնը նշելու տոնակատարություններին ԹՀ պատմության մեջ առաջին անգամ չմասնակցեցին տանկեր, հրետանի, զրահամեքենաներ, մարտական ինքնաթիռներ ու ուղղաթիռներ, ինչի պատճառը 1.5 ամիս առաջ գրանցված ՌՀՓ-ն էր (Թուրքիայում օգոստոսի 30-ը պաշտոնապես Հաղթանակի տոն է դարձել 1935թ. մայիսին)[7]:

Այս համատեքստում նշենք, որ Թուրքիայում աննախադեպ իրադարձություն էր գրանցվել 2011թ. օգոստոսի 30-ի տոնակատարությունների ժամանակ: Առաջին անգամ դրանք ընդունել էր ոչ թե ԳՇ պետը, այլ երկրի նախագահը (Աբդուլա Գյուլ): Նախկինում այդ տոնը նշվել էր ԳՇ՝ հյուրերի համար նախատեսված դահլիճում, և այն ավանդաբար ընդունել է «տանտերը»՝ ԳՇ պետը: Մինչդեռ 2013թ. օգոստոսի 30-ին ԹՀ պատմության մեջ առաջին անգամ տոնական արարողությունն ընդունեց երկրի նախագահ Աբդուլա Գյուլը՝ որպես «գերագույն գլխավոր հրամանատար»: Հենց Գյուլը կանգնեց Թուրքիայի երկու դրոշների մեջտեղում՝ ընդունելով Հաղթանակի տոնին առնչվող նախարարների ու բարձրաստիճան զինվորականների շնորհավորանքները: Այդպիսով Աբդուլա Գյուլը դարձավ Թուրքիայի պատմության մեջ առաջին «գերագույն գլխավոր հրամանատարը»[8]:

[5] Erdoğan 30 Ağustos resepsiyonunda konuştu, Sözcü, 30.08.2017.
[6] Hulusi Akar'ın eşinin Kur'an hassasiyeti, En Son Haber, 30.08.2017.
[7] 30 Ağustos Zaferi'nin 94. yılı; ilk kez tanksız-uçaksız tören, T24, 30.08.2016.
[8] *Հայկ Գաբրիելյան,* Ներքաղաքական պայքարի սրացումը Թուրքիայում, «Նորավանք» ԳԿՀ, 11.10.2011:

Այսպիսով, Էրդողանը շարունակում է Թուրքիայի անցյալի փառաբանման իր քաղաքականությունը, ինչը նրա վարած նեոօսմանիզմի քաղաքականության բաղադրիչներից է: Ներկա դրությամբ Թուրքիայի բազմաթիվ տնտեսական, ռազմական և այլ ոլորտի նախագծեր շաղկապվում են 2023-ի հետ, այսինքն՝ տվյալ նախագծերը պետք է կյանքի կոչվեն մինչև 2023թ.: Խոսքը մեգանախագծերի մասին է, ինչպիսիք են Ստամբուլի ջրանցքը, Ստամբուլի 3-րդ օդանավակայանը, թուրքական մշակման առաջին կործանիչը (*TF-X*) և այլն: Էրդողանն այդպիսով դնում կամ փորձում է դնել համապատասխան ավանդույթի հիմքը, որը, նրա հաշվարկներով, պետք է պահպանվի և իրագործվի նաև 2053թ. և 2071թ. առաջ: Թեև Էրդողանը շարունակ կարևորում է 2023թ., սակայն, միաժամանակ, նա հեռակա պայքարի մեջ է Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի հետ, տարբեր քայլերի միջոցով փորձում է ձերբազատվել նրա ժառանգությունից, հնարավորինս մոռացության մատնել նրան: Աթաթուրքի դեմ պայքարը Թուրքիայում ընթանում է ամենաբազմազան ձևերով. նախագահական նոր պալատ տեղափոխվելիս Էրդողանը հրաժարվել է հին պալատից տեղափոխել Աթաթուրքի նկարը, Թուրքիայի ԶՈՒ կայքից վերացվում է Աթաթուրքի մասին էջը, կրթության նախարարությունը չեղարկում է մայիսի 19-ին՝ Աթաթուրքի հիշողության օրը, դպրոցներում և մարզադաշտերում տոնակատարությունները, ընդհանրապես կրթական համակարգից Աթաթուրքի մասին նյութերի կրճատումը, ՌՀՓ-ից հետո մշակված թուրքական նոր մետաղադրամներից (1 լիրա) վերացվել է Աթաթուրքի պատկերը, որին փոխարինել է ՌՀՓ զոհերի հիշատակը հավերժացնող խորհրդանիշը և այլն: Այս ամենին զուգահեռ, Թուրքիայում շատացել են Աթաթուրքի արձանների վրա կատարվող հարձակումները: Բացի այդ, Էրդողանը շարունակ վարկաբեկում է նաև Աթաթուրքին ու նրա հիմնած կուսակցությունը՝ Ժողովրդա-հանրապետական կուսակցությունը (ԺՀԿ): Հենց այդ դրդապատճառներից ելնելով՝ Էրդողանը 2011թ. նոյեմբերին պետության անունից ներողություն խնդրեց Դերսիմի սպանդի համար, 2012թ. ապրիլին ԺՀԿ-ին մեղադրեց նացիստների հետ համագործակցության համար՝ ցուցադրելով *Cumhuriyet* թերթի 1930–ական թվականների

համարները, 2012թ. սեպտեմբերին հիշատակեց 1945թ. ԺՀԿ-ական իշխանությունների կողմից 145 ադրբեջանցի սահմանախախտ մտավորականի ԽՍՀՄ-ին հանձնելը, ինչից հետո նրանց զնդակահարեցին թուրք սահմանապահների աչքի առջև։

Թեև ներկայում շատերն Էրդողանին համարում են ԹՀ պատմության մեջ Աթաթուրքից հետո ամենաուժեղ նախագահ, սակայն դա (երկրորդ հորիզոնականը) չի գոհացնում Թուրքիայի ներկայիս նախագահին, և Էրդողանն ամեն կերպ ցանկանում է գերազանցել Աթաթուրքին, ստվերել նրան, և այդ համատեքստում շարունակելու է հետագայում նույնպես ջանքեր գործադրել հանրապետական, աշխարհիկ Թուրքիայի արժեքները հանրային գիտակցությունից ջնջելու և նոր պետության՝ «նոր Թուրքիայի» ստեղծման ուղղությամբ։ Էրդողանի «նոր Թուրքիան», թերևս, կսկսի գործել 2020-ից (Աթաթուրքի ստեղծած հանրապետական Թուրքիայի հիմնումից գրեթե մեկ դար անց), եթե նա և նրա Արդարություն և զարգացում կուսակցությունը (ԱԶԿ) հաղթեն 2019թ. ընտրություններում՝ ՏԻՄ, խորհրդարանական ու նախագահական։ Այդ դեպքում Էրդողանը կստանա նախագահական աննախադեպ լայն լիազորություններ և բաղձալի 2023-ը կդիմավորի հենց այդ կարգավիճակով։ Ի դեպ, 2019թ. խորհրդարանական ու նախագահական ընտրությունները նշանակված են նույն օրը՝ նոյեմբերի 3-ին։ Այդ ժամկետը պատահական չի ընտրվել. ԱԶԿ-ն Թուրքիայում իշխանության է եկել 2002թ. նոյեմբերի 3-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքներով։

ԷՆԵՐԳԵՏԻԿ ԳՈՐԾՈՆԸ ԱՐԴԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ[1]

Արմեն Մանվելյան[*]

Էներգետիկ գործոնի դերն արդի միջազգային հարաբերություններում ուսումնասիրման կարիք ունի՝ պայմանավորված այդ գործոնի նշանակության շարունակական աճով արդի աշխարհաքաղաքական զարգացումներում: Թեև նավթային շրջանների նկատմամբ վերահսկողության համար պայքարն արդեն հարյուր և ավելի տարիների պատմություն ունի, սակայն միայն այսօր է, որ այս գործոնում, կարելի է ասել, համաշխարհային նոր միտումներ են ի հայտ եկել՝ պայմանավորված էներգետիկ անվտանգության համակարգերի ստեղծման հարցում մոտեցումների փոփոխությամբ, ինչպես նաև այդ համակարգերի կառուցման համար պետությունների միջև՝ թե՛ մեծ և թե՛ փոքր, ընթացող սուր ու անզիջում մրցակցությամբ:

Առանց էներգետիկ անվտանգության կայուն համակարգի՝ պետությունների զարգացման ու անվտանգային ռազմավարության առաջընթաց պատկերացնելն անհնար է, հետևաբար՝ այդ համակարգերի կառուցման ու կայունության համար ընթանում է համառ պայքար: Իսկ նմանատիպ՝ էներգետիկ անվտանգության համակարգեր միայնակ կառուցել կարող են միայն հազվագյուտ պետություններ, որոնք տիրապետում են ոչ միայն նավթի ու գազի ռեսուրսների, դրա սպառման համապատասխան ծավալների, այսինքն՝ ներքին մեծ շուկայի, և ամենակարևորը ժամանակակից տեխնոլոգիաների ու գիտահետազոտական համապատասխան բազայի, այլև կարողանում են շարունակաբար զարգանալ և նոր մշակումներ իրականացնել այդ բնագավառում:

Նման պետությունների շարքում այսօր կարող ենք նշել, թերևս, միայն ԱՄՆ-ը, որն իսկապես կարողացել է նվազագույնի հասցնել էներգե-

[1] Մաս 3, սկիզբը՝ նախորդ համարներում:

[*] էներգետիկ աշխարհաքաղաքականության և միջազգային անվտանգության մասնագետ, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ.գ.թ.:

տիկ անվտանգության իր համակարգի կախվածությունը միջազգային նավթի և գազի շուկայից, որը կարելի է բնութագրել որպես էներգետիկ անվտանգության առումով մեծ մասամբ ինքնաբավ պետություն: Սակայն, ինչպես նշեցինք, ԱՄՆ-ը բացառություն է այս շարքում, իսկ մյուս պետությունները՝ թե՛ ռեսուրսներ արտահանողները և թե՛ ներմուծողները, կարիք ունեն խորքային համաձայնեցված և կանոնակարգված հարաբերությունների այլ պետությունների հետ, որպեսզի կարողանան կառուցել էներգետիկ անվտանգության լիարժեք և ինքնաբավ համակարգեր: Այդ հարաբերությունների կառուցումը, սակայն, բավական բարդ գործընթաց է՝ պայմանավորված նաև այն հանգամանքով, որ դրանք առնչվում են ոչ միայն տնտեսական, այլև ընդգծված կերպով՝ կողմերի քաղաքական շահերի ու հիմնախնդիրների հետ, հետևաբար՝ նման բարդ խնդրի հանգուցալուծումը պահանաջում է մշտական աշխատանք և ռազմավարությունների մշակման հստակ տեսլական, որը երկարատև կտրվածքով կապահովի արտադրող և սպառող պետությունների հարաբերություններն ու համագործակցությունն էներգետիկ անվտանգության բնագավառում:

Էներգետիկ անվտանգությունն արդի միջազգային համակարգում

Էներգետիկ անվտանգությունը կարևոր նշանակություն ունի արդի միջազգային հարաբերություններում, առաջին հերթին՝ պայմանավորված այդ գործոնի, այսինքն՝ անվտանգության ապահովման բազմազանությամբ: Էներգետիկ անվտանգությունը գործնականում հնարավոր չէ կառուցել միայն հենվելով սեփական ռեսուրսների վրա, դրա համար հարկավոր են բազմակողմ և բազմամակարդակ հարաբերություններ աշխարհի տարբեր պետությունների, միջազգային խոշոր անդրազգային ընկերությունների ու էներգետիկ շուկաների հետ:

Էներգետիկ անվտանգության հայտնի մասնագետներ Կարլոս Պասկուալը և Ջոնաթան Էքինդը էներգետիկ անվտանգությունը կարճաժամկետ հեռանկարում նկարագրում էին որպես բազմազան աղբյուրներով և ուղիներով կայուն մատակարարման ապահովման համակարգ, իսկ

երկարատև հեռանկարում այն նկարագրում էին որպես ածխաջրածնից կախվածության նվազեցում և հետագայում՝ ընդհանրապես հրաժարում[2]:

Սակայն ժամանակը որոշակի ուղղումներ է մտցրել այս տեսակետների մեջ, և պարզ է, որ էներգետիկ շուկաների փոփոխությունների ու զարգացումների ներկա պայմաններում անվտանգության համակարգերը հնարավոր չէ կառուցել ներմուծումների նվազեցման կամ նույնիսկ դրանց բազմազանեցման միջոցով, քանի որ ներկայում կարևոր են այդ գործոնում տեխնիկական ու տեխնոլոգիական արդի լուծումները: Առանց նման լուծումների հնարավոր չէ կառուցել էներգետիկ անվտանգության ժամանակակից համակարգ, իսկ դրա համար հարկավոր է նախևառաջ հասկանալ էներգետիկ շուկայում զարգացման ժամանակակից միտումները և դրանց իրականացման ճանապարհներն ու փորձը աշխարհի տարբեր երկրներում:

Նման ուղղումներից մեկն այն է, որ էներգետիկ անվտանգությունը չի կարելի դիտարկել որպես զուտ էներգակիրների սպառման ապահովում, այլ կարևոր է նաև դրանց արտահանման ու վաճառքի կազմակերպման հստակ մեխանիզմների ներմուծումը: Այսինքն՝ էներգետիկ անվտանգությունը պետք է մեկնաբանվի նաև որպես նավթի ու գազի պաշարներ ունեցող պետությունների համար դեպի սպառման շուկաներ կայուն ելքի ապահովման և շարունակական արտահանման հնարավորություն:

Էներգետիկ անվտանգությունը որքան կարևոր է ներմուծող, նույնքան էլ՝ արտահանող պետությունների համար, հետևաբար՝ այն մեկնաբանման ու սահմանման առավել նոր ձևակերպումների կարիք ունի, որտեղ կշեշտվի, որ այս գործոնը կարևոր է ոչ միայն սպառող, այլև արտադրող պետությունների համար: Թերևս, վերջինների համար՝ առավել ևս, քանի որ նրանց տնտեսական ու քաղաքական կախվածությունն այդ գործոնից շատ ավելի մեծ է՝ պայմանավորված վերջիններիս ՀՆԱ-ում էներգետիկ սեկտորի մեծությամբ: Հետևաբար, այս տիպի պետությունների համար էներգետիկ անվտանգությունն արտահայտվում է այս ապրանքի արտահանման շուկաների հետ անընդհատ ու կայուն աշխա-

[2] *Carlos Pascual, Jonathan Elkind,* “Economics, Politics, Strategies, and Implications”, Brooking Institution Press, Washington, D.C. 2010.

տանքի երաշխիքներով, ինչն ավելացնում է հենց սպառող պետությունների դերակատարումը արտահանողների համար: Վերջիններս ստիպված են այդ կարևորությունն արտահայտել նաև քաղաքական, երբեմն նաև ռազմավարական դաշինքներ կազմելով այն պետությունների հետ, որոնք հանդիսանում են նրանց ապրանքի՝ էներգետիկ հումքի հիմնական սպառողները:

Կարլոս Պասկալը և Ջոնաթան Էքինդն իրենց աշխատանքում էներգետիկ անվտանգությունը ձևակերպում էին նաև որպես «անընդհատ ընտրություն տնտեսական զարգացման, ազգային անվտանգության և բնության պահպանության միջև»[3]: Ընտրության այս խնդիրը միշտ էլ կանգնած է պետությունների առջև, երբ խոսքն էներգետիկ անվտանգության մասին է, քանի որ միշտ չէ, որ այդ անվտանգության կառուցման տնտեսական, քաղաքական կամ բնակլիմայական բաղկացուցիչները համընկնում են: Երբեմն պետությունները ստիպված են լինում այս ընտրության արդյունքում ընդունել քաղաքական որոշումներ՝ կարևորելով ազգային անվտանգության հիմնախնդիրներն ի հաշիվ տնտեսական շահավետության, ասենք՝ նվազեցնելու համար կախվածությունն այս կամ այն պետությունից: Նման քաղաքական ընտրության օրինակ է ԵՄ շատ անդամ պետությունների հարաբերությունները Ռուսաստանի հետ, երբ վերջիններս նախընտրում են թանկ գնով էներգակիրներ ներմուծել այլ պետություններից՝ ի վնաս իրենց տնտեսական շահերի, սակայն նվազեցնել քաղաքական կախվածությունը Մոսկվայից:

Կարելի է բերել մեկ այլ օրինակ ևս, երբ ԵՄ-ը, էկոլոգիական շահերից ելնելով, որոշում ընդունեց զարկ չտալ թերթաքարային նավթի ու գազի շահագործմանն այդ միության անդամ պետությունների տարածքում, ինչը վնասում էր այդ պետությունների տնտեսական ու նաև անվտանգային շահերին: ԵՄ անդամ այլ պետություններ էլ, օրինակ՝ Գերմանիան կամ Դանիան, զարգացնում են վերականգնողական էներգետիկան, ինչը տնտեսական առումով ձեռնտու չէ, քանի թանկացնում է էլեկտրաէներգիայի գինն այդ պետություններում, սակայն նպաստում է տեխնոլոգիա-

[3] Նույն տեղում:

կան և էներգետիկ անվտանգության զարգացմանը: Կամ, օրինակ, Պարսից ծոցի պետությունները համաձայնում են շուկայականից ցածր գներով նավթ արտահանել Չինաստան՝ արագ կերպով զարգացող այդ պետության էներգետիկ սեկտորում կայուն և մշտական տեղ զբաղեցնելու համար: Սա արվում է ի վնաս իրենց տնտեսական շահերի, սակայն շահում են քաղաքական առումով՝ տեղ են զբաղեցնում ամենամեծ շուկաներից մեկում, նվազեցնում են իրենց կախվածությունն Արևմուտքի սպառման շուկայից և զարգացման որոշակի կայունություն ու արտաքին հարաբերություններում որոշակի անկախություն ձեռք բերում և այլն:

Նման օրինակները բազաթիվ են, շատ պետություններ էլ նախընտրում են էժան հումքը՝ չնայած դրանց քաղաքական որոշակի բացասական հետևանքներին, այլ պետություններ արագ կերպով զարկ են տալիս այսպես կոչված վերականգնողական էներգետիկայի զարգացմանը, չնայած դրա տնտեսական ոչ նպատակահարմարությանն ու թանկությանը, սակայն կարևորում են իրենց քաղաքական անկախությունը ներմուծող պետություններից և այլն:

Ատոմային էներգետիկայի դերը վերջին տարիներին մի շարք պետություններում փոխվել է, և, օրինակ, Ճապոնիան և Գերմանիան նախընտրում են փակել այդ կայանները բնապահպանական խնդիրներից ելնելով, ինչը, սակայն, վնասում է նրանց տնտեսական զարգացման հեռանկարներին: Իսկ Չինաստանը զարկ է տալիս ատոմային էներգետիկային՝ միաժամանակ կառուցելով մոտ 28 այդպիսի կայան պետության տարբեր շրջաններում: Իսկ, օրինակ, ԱՄՆ-ը 2016թ. որոշում ընդունեց թույլատրել նավթի և գազի արտահանումը, ինչը, սակայն, գազի արտահանման առումով, տնտեսապես նրան ձեռնտու չէր, սակայն կարևորվեց քաղաքական շահը: Այս որոշման հետևանքով գազի գինը ԱՄՆ ներքին շուկայում մոտ 50%-ով թանկացավ, սակայն այն վնասեց Ռուսաստանին՝ ստիպելով վերջինիս 40-60%-ով նվազեցնել գազի գինը եվրոպական շուկայում[4]:

Ինչևէ, այսպիսի օրինակները շատ են, և դրանք մեկ անգամ ևս գալիս են ապացուցելու, որ էներգետիկ անվտանգությունն իսկապես ան-

[4] Crude Oil & Natural Gas, https://www.bloomberg.com/energy

ընդհատ ընտրություն է, և ամեն անգամ ստիպված ենք այն կատարել՝ ելնելով դրա քաղաքական, տնտեսական կամ էկոլոգիական նպատակահարմարությունից:

Այսպիսով, ամփոփելով էներգետիկ անվտանգության ազդեցության վերլուծությունը ժամանակակից միջազգային հարաբերությունների վրա՝ պետությունները կարելի է բաժանել հետևյալ տիպերի.

1. պետություններ, որոնք իրենց հարաբերությունները կառուցում են՝ առաջնությունը տալով հարցի տնտեսական բաղկացուցչին. եթե ներմուծողների համար կարևոր է այդ հումքի էժանությունը, ապա արտահանողները փնտրում են հնարավորինս թանկ շուկաներ,
2. պետություններ, որոնք, ելնելով ազգային անվտանգության կամ քաղաքական նպատակահարմարությունից, նախընտրում են էներգակիրներ ներմուծել դաշնակից պետություններից, թեկուզև թանկ գներով,
3. պետություններ, որոնք առաջնությունը տալիս են հարցի լուծման էկոլոգիական գործոնին և թույլ չեն տալիս վնասակար աղբյուրների ու տեխնոլոգիաների զարգացումը՝ ի վնաս իրենց բնակչության, սակայն դա չի նպաստում տնտեսության զարգացմանը: Նման քաղաքականությունը հատուկ է, որպես կանոն, զարգացած պետություններին:

Շարունակելի

«ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ» ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ԴՈԿՏՐԻՆ ԼԻԲԵՐԱԼ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Էդուարդ Աթանեսյան*

Լիբերալիզմի՝ որպես փիլիսոփայական և հասարակական-քաղաքական հոսանքի (որը շեշտադրում է մարդու իրավունքների և անհատական ազատությունների անսասանությունը) պոպուլյարությունը բնորոշ է մեր ժամանակներին: *Մինարխիզմի* (*minarchism*)[1], *չմիջամտելու սկզբունքի*[2] *և մշակութային լիբերալիզմի* գաղափարները՝ որպես լիբերալիզմի սոցիալական չափում, որը հռչակում է ազատություն մշակույթի նորմերից, արձագանք են գտնում այն հասարակություններում, որոնք գտնվում են հասարակական-քաղաքական և մշակութային զարգացման տարբեր մակարդակներում, այդ թվում և հետխորհրդային տարածքում:

Ո՞րն է ծանոթ ու հարազատ ավանդականությունից հրաժարվելու և լիբերալիզմի ձգողականության ֆենոմենի գաղտնիքը: Գոյություն ունի՞ արդյոք դեմոկրատիայի՝ որպես մեծամասնության իշխանության երկարաժամկետ ներդաշնակ փոխգործակցության ալգորիթմ լիբերալիզմի հետ՝ իր բազմաթիվ դրսևորումներում, որոնք դավանում են ամեն տեսակ «կամայականությունից» և սահմանափակումներից առավելագույն ազատության իրավունք:

Մեր կարծիքով, լիբերալիզմը՝ որպես փիլիսոփայական և հասարակական-քաղաքական հոսանք, բավական դինամիկ է, այն նախատեսում է «հնարավորությունների» մշտական ընդլայնում անհատի համար, որոնք հետագայում կոդիֆիկացվում են իրավունքի: Մի ինչ-որ «անհասանելի

---

* Ք.գ.թ.:

[1] Քաղաքական գաղափարախոսություն, որը հանդես է գալիս հօգուտ պետության դերի առավելագույն նվազեցման, նրա լեգիտիմ գործառույթի սահմանափակման ագրեսիայից անհատների պաշտպանությամբ: Մինարխիստների համաձայն՝ պետության գոյությունը «անհրաժեշտ չարիք» է (տե՛ս https://definitions.uslegal.com/m/minarchism/):

[2] Laissez-faire [լեսե ֆեր]՝ ֆրանսերեն «թույլ տվեք անել», տնտեսությանը պետական միջամտությունը նվազագույնի հասցնելու դոկտրին:

գաղափարի» հետևից ընթանալով՝ լիբերալիզմն առաջ է անցնում դեմոկրատական օրենքից: Անհատի ինքնաիրացման գործընթացն անցել է անշրջելիության կետը, և պետությունը դեմոկրատական իրավունքների անխախտ սահմաններ հաստատելու ավելի ու ավելի քիչ շանսեր ունի, և արգելողի կամ հետևից հասնողի դերի միջև ընտրության դիլեման բնորոշ է մեր օրերին:

Ի տարբերություն խորհրդային անցյալի ձախ գաղափարների՝ լիբերալիզմը բավական ճկուն է պետության սոցիալական գործառույթի հարցում՝ նախատեսելով բևեռային մոտեցումներ սույն ոլորտում: Այսպես, որքան ավելի մեծ սոցիալ-տնտեսական ինքնաբավության է հասել անհատը, այնքան ավելի քիչ նա պետության խնամքի կարիքն ունի և, հետևաբար, դասական լիբերալիզմի ոգով հանդես է գալիս իշխանության լիազորությունների սահմանափակման օգտին՝ արտաքին և ներքին սպառնալիքներից անհատի սեփականության պաշտպանությամբ: Իր հերթին, սպասելի է, որ սոցիալապես խոցելի շերտերի ներկայացուցիչները հանդես գան սոցիալական լիբերալիզմի օգտին՝ պետության դերի մեծացում բնակչության բարեկեցության ապահովման գործում, ներառյալ տնտեսական մրցակցության սահմանափակումներ մտցնելը և այլն: Այս մոտեցումները հատկապես ակտուալ են հետխորհրդային տարածքի համար. ԽՍՀՄ փլուզումը և «ազատ շուկայի» տիրապետումը չհանգեցրին մարդկանց հայացքների ակնթարթային փոփոխության պետության սոցիալական պատասխանատվության ծավալի վերաբերյալ: Եթե Արևմուտքում, որոշ քաղաքական և աշխարհաքաղաքական պատճառներից ելնելով, պետության դրական ներգրավումը սոցիալական ոլորտում որոշակի փուլում ընթանում էր վերընթաց կերպով (աշխատավարձերի բարձրացում, աշխատանքային շաբաթի կրճատում, սոցիալական և բժշկական ապահովագրության ներդրում, արհմիությունների ուժեղացում և այլն), ապա հետխորհրդային տարածքում տեղի էր ունենում պետության փաստացի հրաժարում պարտավորությունների նման համախմբից, որին այն տիրապետում էր ԽՍՀՄ-ի օրոք: Հրաժարումը կոմունիզմի պատգամներից բազիսի մակարդակով և վերնաշենքի արմատական լիբերալացումը (պետական ունեցվածքի «ճիշտ» մասնավորեցում և ինդուստ-

ռիալիզացիայից փաստացի հրաժարում) հանգեցրին մեկ այլ ծայրահեղության՝ պետության տնտեսական կարգավորիչի դերի նվազեցման, ինչը մշտապես վիճարկվում էր միջազգային ֆինանսական կազմակերպությունների, վարկանիշային գործակալությունների և բանկային ոլորտի կողմից:

Պետության դերի որակական փոփոխությունը չէր կարող չանդրադառնալ նրա հանդեպ վերաբերմունքի վրա: Եթե այն քիչ է տալիս, ապա, համապատասխանաբար, պետք է քիչ էլ պահանջի և չսահմանափակի նրանց, ովքեր ցանկանում են «գնալ իրենց ճանապարհով»: Ձևավորված քննադատական մոտեցումը, որը պետությունը գնահատում էր բացառապես անհատական իրավունքների և ազատությունների պրիզմայի միջով, լուրջ գաղափարախոսական մարտահրավեր դարձավ ազգային պետությունների համար, որոնք գտնվում էին սոցիալ-տնտեսական կայացման փուլում: Իսկ ԵՄ տնտեսապես զարգացած դեմոկրատիաների (այլ ոչ թե Արևելյան Եվրոպայի «նորելուկների») հետ հետխորհրդային տարածքի պետությունների համեմատության գործելակերպն անտեսում է օբյեկտիվ պատմական և քաղաքական-տնտեսական իրողությունները և էլ ավելի բարդացնում իրավիճակը: Այսպես, Հայաստանի պարագայում նշյալ մոտեցումը տանում է դեպի ազգային պետության անցած ճանապարհի փոքրացման, պետության, որի գոյությունն ինքնին 1990-ականների սկզբին դիտարկվում էր որպես պատմական երևույթ: Եվ իսկապես. փոքրաթիվ ժողովուրդը, որը հնագույն քաղաքակրթությունների հասակակիցն է և անցել է պատմության վայրիվերումներով ու Ցեղասպանություն ապրել, վերականգնեց անկախությունն ու դիմացավ սոցիալ-տնտեսական ճգնաժամի պայմաններում, որն իր հերթին խորացել էր 1988թ. երկրաշարժի հետևանքներով, Ադրբեջանից հարյուր հազարավոր փախստականների հոսքով, տրանսպորտային-հաղորդակցական շրջափակմամբ և Արցախին ու հայ-ադրբեջանական ողջ պարագծով պարտադրված պատերազմով: Մինչդեռ, լիբերալ մոտեցումը զուրկ է գաղափարախոսական զարդարանքներից և անտեսում է պատմության գործոնը. նոր Հայաստանի կառուցման գործընթացը դիտարկվում է ոչ թե ազգային պատմության ընդհանուր համատեքստում, այլ զուտ վարկանիշային աղյուսակների պրիզմայով, որոնք հայկական իրողություններն արտացոլում են այլ պետությունների որակական-քանակական բնութագրիչների համեմատության մեջ:

Լիբերալիզմի վերաբերմունքը պետությանը պայմանավորված է նաև մարդու և հասարակության կյանքում կրոնի դերի փոփոխման գործոնով, նրա՝ հոգևոր աշխարհընկալումից բարոյաէթիկական գործոնի, իսկ հետո նաև զուտ մշակութաբանական երևույթի վերածվելու գործոնով:

Մարդու կյանքն ավանդաբար ընթացել է աշխարհիկ (մարդկային) օրենքների և կրոնական (Աստվածային) կանոնների փոխադարձ կարգավորման մի ինչ-որ ոլորտի սահմաններում: Այդ նույն Արևմտյան Եվրոպայում պետության և եկեղեցու փոխհարաբերությունների ողջ առանձնահատկությամբ հանդերձ (նրանց բաժանումից հետո)՝ օրենքները և կանոնները միասին սահմանեցին մարդու վարքականոնը քաղաքացիական իրավունքի և բարոյական (կրոնական) դիրքորոշումների կոորդինատների համակարգում: Յուրաքանչյուրին իրենը տալու կանոնը, ինչին լեգիտիմորեն հավակնում է ստեղծված իրավիճակին համապատասխան, ձևակերպել է դեռևս Քրիստոսը: Նրա «կեսարինը կեսարին տվեք, Աստծունը՝ Աստծուն»[3] բանաձևը հնչել է ի պատասխան փարիսեցիների «Ուրեմն ասա՛ մեզ. ի՞նչ ես կարծում, օրենքով թույլատրելի՞ է կայսրին գլխահարկ տալ, թե՞ ոչ»[4] հարցի:

Մինչդեռ, սեկուլյարիզմը սոցիալական ոլորտի վրա արտածելը մոտեցնում է լիբերալիզմն իր գաղափարախոսական հակոտնյայի՝ կոմունիզմի հետ: Ավանդական քրիստոնեական (և ոչ միայն) աշխարհայացքում կյանքը, այդ թվում և նրա դժվարությունները հասկանալու բանալին «մարդ-Աստված» հարաբերությունների համակարգն է, որից հետևում է մարդու հոգևոր ինքնակատարելագործման անհրաժեշտությունը՝ որպես Աստծու ողորմածության հույսի և «սև գծի հաղթահարման» նախապայման: Իսկ սեկուլյար աշխարհընկալման մեջ mea culpa-ն դեն է նետվում, բողոքականության մեջ տարածված հոգևորության և բարեկեցության միջև կապի հայեցակարգը ջնջվում է, և կյանքի դժվարությունների միակ մեղավոր է դառնում պետությունը՝ հանձին իր սոցիալ-տնտեսական քաղաքականության:

Բայց կրոնի հետ կապի խզումը թուլացնում է պետության դիրքերն անգամ օրինականության այնպիսի հիմնարար սկզբունքի առկայության

[3] Տե՛ս Մատթեոսի Ավետարան 22:21:
[4] Տե՛ս Մատթեոսի Ավետարան 22:17:

դեպքում, ինչպիսին է *օրենքի գերակայությունը:* Կրոնի բարոյաէթիկական գործառույթից հրաժարվելն անխուսափելիորեն հանգեցնում է մեղք կրոնական հասկացության ապաակտուալացման, և անհատի միակ լեգիտիմ սահմանափակիչն է դառնում հանցագործությունը՝ իր պետաիրավական մեկնաբանմամբ. *պետության օրենքի խախտում*: Սրանից բխում է, որ այն ամենը, ինչը չի հակասում օրենքին, չի կարող արգելվել, ուրեմն՝ *մեղք չի համարվում*: Եվ քանի որ իրավական նորմերն ավելի հաճախ են փոխվում, քան կրոնական դոգմաները, պետության ինստիտուտը, տեսականորեն, դատապարտված է դառնալ «հարկավոր» օրենքների սեղմման մեխանիզմ: Եթե մարդկության պատմությունը համարենք իդեալական հասարակության ստեղծման փորձերի ամբողջություն, ապա ԽՍՀՄ փլուզումը դարձավ «երկրային դրախտի» կառուցման առավել մասշտաբային անհաջողության օրինակը: Կոմունիստական գաղափարախոսության ճգնաժամն անդրադարձավ ոչ միայն հետխորհրդային տարածքի, այլ նաև արևմտյան կապիտալիզմի զարգացման վեկտորի վրա: Առանց իրենց հիմնական հակառակորդի հետ գաղափարախոսական երանգավորում ունեցող մրցակցության՝ արևմտյան հասարակությունները, որոնք կողմնորոշված էին դեպի ֆինանսական շահութաբերություն և տնտեսական նպատակահարմարություն, կորցրին «դրախտի» սեփական մոդելի կառուցման մոտիվացիան: Որպես արդյունք տեղի ունեցավ արտադրության տեղափոխում էժան աշխատուժով երկրներ, աշխատատեղերի կրճատում և այլն: Գուցե այստեղ են թաքնված լիբերալ գաղափարների ծաղկման արմատները. ի տարբերություն երբեմնի պոպուլյար ձախ հայացքների՝ դրանք հնարավոր են համարում «դրախտի» կառուցումը առանձին վերցրած մարդու համար: Դա դեպի երջանկություն տանող ճանապարհն է՝ տկարների հանդեպ հոգեբանական ապրումակցումի «ավելորդ» բեռից և ընչազուրկների հանդեպ սոցիալական պատասխանատվությունից հրաժարվելու միջոցով: Սույն աշխարհայացքի շրջանակներում անձի իրավունքները բխում են ոչ թե կոլեկտիվ իրավունքներից (ազգի, հասարակության, կաստայի, դասի և այլն), այլ սկզբից ևեթ անհատի անօտարելի ատրիբուտն են: Այսօր լիբերալ «դրախտի» բանաձևն այն չէ, որ կենսագործվի հերթական ուտոպիան՝ հարմա-

ռավետ պայմանների ամբողջությամբ, այլ պայքարն է ցանկացած պատնեշի և թաբուի դեմ այն ճանապարհին, ինչն ընդունված է անվանել «անհատական ինքնաիրացում»:

Լիբերալ աշխարհայացքին բնորոշ՝ մարդու հնարավոր բոլոր իրավունքների և ազատությունների առավելագուն կոդիֆիկացիայի միտմանը կարելի է տարբեր կերպ վերաբերվել: Չխորանալով առկա դիսկուրսի մեջ՝ ուշադրություն դարձնենք լոկ մի էական գաղափարախոսական բացի վրա. անձի ինքնաիրացման հանդեպ ջերմ վերաբերմունքով հանդերձ՝ արդի քաղաքացիական իրավունքը հակված է այն դիտարկել ավելի շուտ կենսաբանական չափմամբ, բացառապես նրա ֆիզիկական գոյության ժամանակային շրջանակներում: Այսինքն՝ իրավական կարգավորման առարկա են հանդիսանում ծնունդը, մահը և այն, ինչ ընկած է նրանց միջև: Բայց չէ՞ որ սույն մոտեցումը լիովին չի արտացոլում մարդկության զգալի հատվածի հայացքները «կյանք» և «մահ» հասկացությունների վերաբերյալ: Լիբերալ փիլիսոփայությունում այն ամենը, ինչ սպասում է մարդուն մահվամբ (իսկ դա արդեն կրոնի ոլորտն է), չի արտածվում նրա «կյանքի օրոք» ունեցած իրավունքների վրա:

Հարցադրումը կարող է աբսուրդ թվալ: Բայց լոկ առաջին հայացքից:

«Աբրահամական կրոնները» կամ Կտակարանի[5] կրոնները, որոնց հետևորդների ընդհանուր թիվը 2010թ. դրությամբ կազմում էր մոտ 3,814 մլրդ մարդ (երկրագնդի ողջ բնակչության 55,2%-ը)[6], մարդուն դիտարկում են ոչ միայն որպես ֆիզիկական էակ, բնության պսակ, այլ նաև որպես հոգևոր արարած, որը միաժամանակ գոյություն ունի երկու չափումներում՝ կյանքի և աննյութական, հոգևոր չափման (դրախտ կամ դժոխք) անցման՝ մահի[7]: Կյանքը ֆիզիկական մարմնում դիտարկվում է որպես ժամանակավոր, բայց կարևոր փուլ, որը պայմանավորում է մարդու «հե-

[5] Օգտագործվում է հուդայականության, քրիստոնեության և իսլամի առնչությամբ՝ որպես կրոններ, որոնց, դոգմաների տարբերությամբ հանդերձ, հայեցակարգային առումով, միավորում է Աստծո և մարդու միջև ուխտի կանխադրույթը:

[6] *Տե՛ս* The Global Religious Landscape A Report on the Size and Distribution of the World's Major Religious Groups as of 2010, Pew Research Center, DECEMBER 2012, http://www.pewforum.org/files/2014/ 01/global-religion-full.pdf

[7] Քրիստոնեության տեսակետից, Քրիստոսի երկրորդ գալստյամբ հոգին միանալու է մարմնին և հավիտենական կյանք է ժառանգելու կամ հավիտենական կործանում արդեն սեփական հարություն առած մարմնում:

տագիծը» հավիտենական կյանքում: Եվ իհարկե, Երկնային արքայության, Դրախտի կամ ջեննեթի հասնելու ձգտումը ենթադրում է անշեղորեն հետևել որոշակի վարքականոնի, այդ թվում՝ զուտ աշխարհիկ կյանքի, իրավունքների և հասարակության ու պետության առջև պարտավորությունների շրջանակներում[8]:

Մինչդեռ, կյանքի տարբեր ասպեկտների խոր լիբերալացումը և հասարակական-քաղաքական ու տնտեսական հարաբերություններում մարդու ինտեգրման ներկա մակարդակը զգալիորեն նեղացնում են «հնարավորությունների պատուհանը»՝ համապատասխան վարքականոնին հետևելու համար: Իհարկե, արդի աշխարհում մարդկանց ուժով չեն ստիպում երկրպագել Բաալին կամ օրհներգել Աստրատեին: Եվ այնուամենայնիվ, քաղաքական գործընթացի շրջանակներում նրանցից երբեմն պահանջում են ինքնակամ համաձայնություն (մասնակցություն) կամ, առնվազն, հանդուրժողական վերաբերմունք (գործակցություն) արժեքային հարացույցի փոփոխությանը և այն երևույթների լեգալացմանը, որոնք գտնվում են ոչ միայն դասական կրոնական, այլ նաև ավանդական աշխարհիկ աշխարհընկալման սահմաններից դուրս: Խոսքն, առաջին հերթին, լիբերալ հովերի ներգործության մասին է սոցիալական այնպիսի զգայուն ինստիտուտների վրա, ինչպիսին են ընտանիքը և ամուսնությունը[9]:

Եվ այսպես, ինչպիսի՞ն կարող է լինել ավանդապաշտների[10] կողմից իրենց իրավունքների ապահովման գիծը լիբերալ գաղափարների քաղաքական և օրենսդրական ամրագրման պայմաններում: Արդյո՞ք հատկանշական է իրավապահպանողական տրամադրությունների ուժեղացումը՝ հաջակցություն ստեղծված իրավիճակի արմատական փոփոխության: Նման դիսկուրս ձևավորվում է ԵՄ մի շարք երկրների և ԱՄՆ հասարակություններում՝ որպես ակնկալվող արձագանք վերոնշյալ երևույթների

[8] Ինչպես անցյալում, այնպես էլ այսօր գոյություն ունեն տարբեր կրոնների ներկայացուցիչների խաղաղ գոյակցության բազմաթիվ օրինակներ նույն հասարակության սահմաններում, և ոչ միայն դեմոկրատական (եզրի դասական ընկալմամբ) պետություններում:

[9] Այն ամենը, ինչ կա մասնավոր կարգով, «անհատական իրավունքների իրացման» համատեքստում, վաղուց արդեն իրավական կամ այլ հետապնդման առարկա չէ անգամ երբեմնի պահպանողական երկրների և հասարակությունների մեծ մասում:

[10] Փաստորեն, ավանդապաշտներ են այդ նույն իշխող եվրոպական դինաստիաները, որոնք չեն փոխում դինաստիայի շարունակման և գահը ժառանգելու գոյություն ունեցող գործելակերպը՝ ժամանակակից ընկալումների ոգով:

օրենսդրական լեգալացման՝ շրջանցելով հասարակության ուղղակի կամարտահայտումը հանրաքվեների կամ պլեբիսցիտների միջոցով:

Թե ինչպիսին կլինեն նման գործընթացների արդյունքները՝ ժամանակի և ընտրության հարց է: Համենայնդեպս, դրանց դինամիկան պայմանավորված կլինի ինչպես հասարակական-քաղաքական կյանքի առանձնահատկությամբ և յուրաքանչյուր առանձին վերցրած երկրի քաղաքական ուժերի դասավորությամբ, այնպես էլ կրոնական ոլորտի լիբերալացման երևույթով, որը տեղ-տեղ ներառում է արմատական հրաժարում դոգմաներից: Այս առնչությամբ հետաքրքիր է թվում Դալայ-լամա XIV-ի դիրքորոշումը, որը կոչ է անում բարոյական այնպիսի մոտեցման, որը «հիմնված է ավելի շուտ ընդհանուր, քան թե կրոնական մոտեցումների վրա»[11]: Կրոնական կանխադրույթների վերանայումը՝ դրանց «արդիականացման» իմաստով, թուլացնում է պահպանողականների՝ իրենց դիրքերը կրոնական դոգմաների և բարոյաէթիկական նորմերի անխախտելիությամբ հիմնավորելու փորձերը, իր հերթին՝ լիբերալ միջավայրը պնդում է իր արժեհամակարգի հարցում՝ միաժամանակ դրանց տակ համապատասխան իրավական հիմք դնելով:

Ամուսնության, ընտանիքի սեփական ընկալման պաշտպանության համարժեք ռազմավարության բացակայությունը իրավական հարթությունում ավանդապաշտների թույլ կողմերից ևս մեկն է: Թվում է, թե իրենց իրավունքների հասարակական-քաղաքական մեթոդների կողքին, որոնք երաշխավորում է լիբերալ դեմոկրատիան, նրանց կողմից բավական պահանջված չէ դատական կարգով իրավունքների պաշտպանության և համապատասխան դատական նախադեպերի ստեղծման մեթոդը: Այնինչ, անգամ լիբերալ փիլիսոփայությունում հավիտենական կյանքի ձգտման իրավունքը կարող է մեկնաբանվել որպես մի ինչ-որ «ուղեկցող արտադրանք», որը բխում է ֆիզիկական կյանքի իրավունքից և, հետևաբար, ցանկացած մարդու անքակտելի իրավունքն է: Այս տրամաբանության շրջանակներում «իրավունքների հավաքածուն» չի սահմանափակ-

[11] *Տե՛ս* Гьяцо Танзин (Далай-лама XIV), Этика для нового тысячелетия, 1999г., пер. Т.Голубевой. *Հետագայում գաղափարները զարգացում են ստացել՝* Далай-лама, Больше чем религия. Этика для всего мира, пер. с англ. Н.Иноземцевой, М.; Фонд “Сохраним Тибет”, 2016.

վում դրանց մի մասով մարդուն օժտելով նրա ծննդյան (օրինակ, Իռլանդիայում՝ սաղմնավորման) պահից, դրանց ընդլայնմամբ՝ մինչև կենսաբանական մահը և նրա հիշատակի ու մասունքների հանդեպ հարգանքի երաշխավորմամբ: Նկատի է առնվում, որ եթե մարդն իր հոգու անմահությանը հավատալու իրավունք ունի, ապա, համապատասխանաբար, պետք է ունենա իր կյանքի համապատասխան կազմակերպման իրավունք կրոնի պահանջներին համապատասխան: Հետևաբար, առաջ է գալիս օրենքների և կանոնների ներդաշնակեցման անհրաժեշտություն, այլ ոչ թե մեկի ուռճացում և մյուսի ոտնահարում: Հարցը ոչ թե այս կամ այն կրոնական հայացքների և համապատասխան կրոնական պրակտիկաների վերաբերյալ անհատական իրավունքի ապահովումն է, այլ հասարակության և պետության հետ այդ անհատի փոխգործակցության ալգորիթմի: Անհատի հավիտենական կյանքի իրավունքի ինդոկտրինիզացիան և ի պաշտպանություն նրա իրավաբանական փաստարկների մշակումը կարող են դառնալ անհատական և կոլեկտիվ իրավունքների պաշտպանության միջոց այնտեղ, որտեղ հասարակական-քաղաքական իրողությունների պատճառով քաղաքացիների կողմից իրենց ավանդական հայացքների պաշտպանությունը քաղաքական մեթոդներով արդեն արդյունավետ չէ:

Քաղաքացիական իրավունքների և պարտավորությունների հետ կրոնական պահանջմունքների ներդաշնակեցումը միասնական պլատֆորմի շրջանակներում կարող է համախմբող դեր խաղալ բազմամշակութային միջավայրում՝ քաղաքացիական իրավունքների և ազատությունների տարբեր մեկնաբանմամբ, ինչն ակտուալ է արդի աշխարհում՝ իր թափանցիկ սահմաններով, միգրացիոն հոսքերով և խոսքի ազատությամբ: Պետության՝ որպես կրոնական իրավունքների և ազատությունների իսկական երաշխավորի՝ դիտարկվող մոտեցումը նոր չէ, բայց իրողություններից ելնելով՝ բավական հեղափոխական է: Այն ենթադրում է պետության սոցիալական պատասխանատվության զարգացում և հրաժարում «դրախտ երկրի վրա» գաղափարից՝ հոգուտ անհատին «մի՛ վնասիր» հիպոկրատյան գաղափարի՝ նրա ինքնակատարելագործման, իսկ հետո արդեն՝ ինքնահիրացման ճանապարհին:

Հուշագիր հեղինակին

«Գլոբուս» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ՝ նվիրված Հայաստանի և Հայության ռազմաքաղաքական, տեղեկատվական և վերջինիս մեջ ընդգրկված քաղաքակրթական ու հոգևոր անվտանգության խնդիրներին, հայկական համայնքների և տարալեզու-տարադավան հայերի կազմակերպչական անվտանգության հիմնահարցերին:

«Գլոբուս» ամսագրի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «Գլոբուս» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen»* տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 7 էջը:
2. Առաջին անգամ հոդված ներկայացնելիս պարտադիր կցել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև հեռավորությունը՝ 1.5:
4. Ինտերնետային աղբյուրների հղումները նշել տողատակում:

Խմբագրություն

«ԳԼՈԲՈՒՍ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 10.10.2017թ.
Թիվ 8 (87), 2017թ.
Տպաքանակը՝ 150։

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 4 մամուլ։ Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Հայկարլի» ՍՊԸ տպարանում